

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

ՀՆՉԱԿԵԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՎԵՐԱՆՈՐՈՎԵՑ ԻՐ ՈՒՆՏԸ ՀԱՆԴԵՊ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Միջազգային թատերաբեմին վրայ, Հայաստանի Հանրապետությանը նսեմացալ: Պատարակուեցալ: Վարկարեկուեցալ: Քոչարեան-Սարգսեան երկուորեակը, իրենց այլասերած լծակներու օգնութեամբ, կեղծած էին Փետրուարեան նախագահական ընտրութիւնները, ի շահ երկրորդին: Նաեւ, ապօրինաբար ընտրուած նախագահ մը (Սերժ Սարգսեանը) պարտադրելու համար, Մարտ 1-ին, քաղաքացիներու Ազատութեան Հրապարակի վրայ, հայ ժողովուրդի դժմալայեցիկ երեւանեան Սումկայիքը: Զոհ գացիմ տասնեակներով հայ եղբայրներ: Քոյրեր: Հայրեր ու Մայրեր: Անոնց մեղքը եղած էր Ազատութեան Հրապարակի վրայ, խաղաղ երթերով, պահանջել արդար, օրինաւոր եւ թափանցիկ նոր ընտրութիւններ: Այդ սեւ օրերուն, խորը հիասթափութիւն կ'ապրէր մեր ժողովուրդը հայրենիքէն ներս: Անորոշ էր երկրի ապագան: Ազգով մէկ խորը էր մեր ցար:

Իրերու այս դրութեան ներքեւ բացուեցալ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի Ա.Դ.Հ. Կուսակցութեան Պատգամաւորական ժողովը, որ տեղի ունեցալ 2008-թ. Մարտի վերջին օրերուն: Աւելի քան երեսուն պատգամաւորներ՝ ձայնատար եւ խորհրդակցական հանգամանքներով իրենց մասնակցութիւնը բերին: Հաւաքին հիւրաբար ներկայ գտնուեցան կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ղեկավար եւ շրջանէն ներս գործող վաստակաւոր ղեկավար ընկերներ:

Ժողովը իր օրակարգին վրայ անցուց ընդհանրական ընդլայն կազմակերպչական, ազգային, հայրենիք-Սփիւռքային վերաբերեալ հարցեր: Նոյնպէս, քննարկման առարկայ դարձան դարաբաղեան հիմնահարցի պարզած ներկայ իրավիճակը եւ վերջապէս, Հայաստանէն ներս տեղի ունեցած փետրուարեան նախագահական ընտրութիւնները:

Պատգամաւոր ընկերներն ու հիւրաբար ներկայ գտնուող ղեկավար ընկերներ ներկայացուած հարցերուն քննարկման բերին իրենց ուշադրաւ մասնակցութիւնը, միշտ գերադասելով մեր ժողովուրդի ընդհանրական շահերը:

Կուսակցութիւնն առաջադրեց ուժաւորել մեր նորահաս սե-

ԵՐՈՊԱՑԻՆԵՐԸ Կ'ԱՌԱՋԱՐԿԵՆ ՎԵՑ ԿԵՏԵՐԷ ԲԱՂԿԱՑԱԾ ԼՈՒԾՈՒՄ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ

Եւրոպայի Խորհուրդի նախարարներու կոմիտէի քննիչ Ազգի խումբի ղեկավար Պէր Սիորգեն Մարտ 31-ին, Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Ոսկանեանի հետ հանդիպումէն ետք տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ 6 կէտերէ բաղկացած առաջարկութիւններ բերած են, իրավիճակը ժողովրդավարական ուղի վերադարձնելու նպատակով:

«Եւրոպայի Խորհուրդի անդամ երկրի համար անընդունելի է քաղաքական բանտարկեալներ ունենալը», - Վարդան Ոսկանեանի ներկայութեան յայտարարեց եւրոպական կառուցիչ ղեկավարը: Ան ընդգծեց, որ խումբը իր ստեղծման օրէն երբեք այսքան մեծ կազմով չէ եկած Հայաստան. կազմին մէջ ընդգրկուած են Եւրոպայի Խորհուրդի անդամ 9 երկիրներու պատուիրակներ: Պատճառը՝ Հայաստանի յետընտրական եւ մասնաւորապէս Մարտի 1-ի իրադարձութիւններու հետեւանքով ստեղծուած իրավիճակն է:

«Եւ-ն Հայաստանը կը դիտէ որպէս տարածաշրջանային կարեւոր երկիր, գործընկեր երկիր, եւ այդ իսկ պատճառով մեզի համար հետաքրքրական է այն իրավիճակը, որ ստեղծուած է Հայաստանի մէջ եւ մենք կարեւոր կը նկատենք



Ազգի խումբի ղեկավար Պէր Սիորգեն

քաղաքական ճանապարհով դժուարութեան յաղթահարումը եւ երկրի վերադարձը ժողովրդավարական ուղի», - ըսաւ Պէր Սիորգեն:

Հայաստանի մէջ ստեղծուած իրավիճակը քաղաքական ճանապարհով յաղթահարելու համար Ազգի խումբի ղեկավարը ՀՀ իշխանութիւններուն եւ ընդդիմութեան ներկայացուցած է 6 կէտերէ բաղկացած առաջարկներ, որոնք նախօրոք մշակուած են Եւրոպայի Խորհուրդի կողմէ, իսկ վերամշակուած են Երեւան մէջ:

Ազգի խումբի առաջարկներ

ըն առաջինը կը վերաբերի քաղաքական բանտարկեալներուն: Պր. Սիորգեն անձամբ այցելած է «Կենտրոն» քրէակատարողական հիմնարկ եւ հանդիպած՝ այն անձերուն հետ, որոնք ձերբակալուած են յետընտրական ժամանակաշրջանին՝ Մարտի 1-ի իրադարձութիւններուն պատճառով եւ այսօր զրկուած են իրենց հարազատներուն հետ շփումէ: Հայաստանի Արդարադատութեան նախարար Պէր Սիորգենին հաւաստիացուցած է լուծել խնդիրը եւ ձերբակալուածներուն հնարաւորութիւն տալ շփուիլ իրենց հարազատներու հետ: Ազգի խումբի 2-րդ առաջարկը կը չի շեցնէ, որ Հայաստան մաս կը կազմէ միջազգային շարք մը կազմակերպութիւններու, որոնք կոչ կ'ընեն ազատ արձակելու քաղաքական դրդապատճառներով ձերբակալուած բոլոր անձից:

Ազգի Խումբի 3-րդ առաջարկի համաձայն ՀՀ Արդարադատութեան նախարարը պարտաւոր է կանոնաւոր Ազգի խումբին տեղեկացնել ձերբակալուածներու ազատ արձակման եւ թէ ձերբակալուածներու հանդէպ դատական ընթացակարգերու վերաբերեալ:

4-րդ կէտով Ազգի խումբը կ'առաջարկէ Մարտի 1-ի իրա-

HUMAN RIGHTS WATCH ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ'ԸՆԵ ՎԵՐԱՑՆԵԼ ԽԱՂԱՂ ՀԱՄԱՔՆԵՐՈՒ ՍԱՅՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի կառավարութիւնը պէտք է վերացնէ հաւաքներու ազատութեան նոր սահմանափակումները եւ դադարեցնէ բողոքի խաղաղ ցուցերուն մասնակցող ընդդիմութեան կողմնակիցներուն բերման ենթարկելը: Այդ մասին անցեալ շաբաթ յայտարարեց Human Rights Watch միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը:

Կազմակերպութիւնը կը յայտնէ, որ Մարտի 25-27-ը ոստիկանութիւնը բերման ենթարկած է առնուազն ութ տասնեակ մարդու, որոնք մասնակցած են Երեւանի կեդրոնը կատարուող բողոքի խաղաղ ցուցերուն՝ «Ժողովրդական զբօսանքներուն»:

«Հայաստանի կառավարութիւնը պէտք է թողնէ տալ խաղաղ ցուցերը, այլ ոչ թէ արգիլէ գանոնք», - յայտարարած է Human Rights Watch-ի Եւրոպայի եւ Կեդրոնական Ասիայի տնօրէն Հոլի Քարթնըրը՝ շեշտելով. - «Նոր սահմանափակումները գործնականին մէջ խաղաղ ցուցարարներուն կը պատժեն Մարտի 1-ին տեղի ունեցած բռնութիւններուն համար»:

Իրաւապաշտպան կազմակերպութիւնը կը պնդէ, որ հաւաքներու ազատութիւնը սահմանափակող օրէնսդրական փոփոխութիւնները, որոնք Ազգային ժողովի կողմէ ընդունուած են Մարտ 18-ին, անորոշ են եւ չեն համապատասխանէր Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններուն:

«Մարդու իրաւունքներու Եւրոպական Ուխտը, որուն Հայաստան միացած է, կ'երաշխաւորէ հաւաքներու ազատութիւնը, եւ կառավարութիւնը չի կրնար անխոհեմ սահմանափակումներ մտցնել այդ իրաւունքի նկատմամբ», - ըսուած է Human Rights Watch-ի յայտարարութեան մէջ: «Մարդու իրաւունքներու Եւրոպական դատարանը խաղաղ հաւաքներու իրաւունքը նկարագրած է որպէս «Ժողովրդավարական հասարակութեան հիմքերէն մէկը» եւ բազմաթիւ առիթներով հաստատած է, որ անհատները չեն կրնար կորսնցնել խաղաղ հաւաքներու իրենց իրաւունքը որեւէ ցուցիչ ընթացքին այլոց պատժելի արարքներու պատճառով»:

«ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԵԼԸ ԽԱԲԿԱՆՔ ԷՐ», - ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՆ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աւելի քան քսան հայաստանեան ընդդիմադիր կուսակցութիւններ Ուրբաթ, Մարտ 28-ին հանդէս եկան յայտարարութեամբ մը, ուր ըսուած է թէ, արտակարգ դրութեան ձեւակաւորէն հանելը ըստ էութեան խաբէութիւն էր՝ միջազգային հանրութեան աչքերուն փոշի փչելու միջոց: «Իրականում, դրանից յետոյ էլ բռնութիւնները, մարդու իրաւունքների ու ազատութիւնների նկատմամբ ոտնձգութիւնները շարունակուած են՝ աւելի հզօր թափով եւ ցինիզմով»:

Ըստ ընդդիմադիր կուսակցութիւններուն, «օրէնսդրական աճապարարութեամբ» ընդհանրապէս արգիլուած է հանրահաւաքներու եւ ցուցերու իրաւունքն օգտուիլը, եւ ոչ միայն Երեւանի, այլեւ հանրապետութեան տարբեր բնակավայրերուն մէջ բռնի ուժով կը ցրուեն բողոքի խաղաղ հաւաքները:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՌԵԺԻՍՆ ԸՆԴԴԵՄ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ

Այն, ինչ այս օրերին կատարում է Հիւսիսային պողոտայում, որեւէ կերպ չի ենթարկւում առողջ տրամաբանութեան կանոններին: Ի դէպ, «առողջ» բառն ամենեւին էլ պատահաբար չենք օգտագործում, որովհետեւ «քաղաքական զբօսանքները» նկատմամբ ոստիկանութեան ռեակցիայի ակնատեսների մէջ առաջինը հենց այդ հարցն է ծնւում. «արդեօ՞ք հոգեպէս առողջ մարդն այսպիսի հրաման կը տար»:

Եւ այնուամենայնիւ, Ռոբերդ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի գործողութիւնները կարելի է հասկանալ: Ամբողջ խնդիրն այն է, որ նրանք «մնացել են երկու քարի արանքում»: Մի կողմից՝ բնագործ նրանց ստիպում է անմիջապէս բոլորին ձերբակալել, միւս կողմից՝ միջազգային կառույցները նրանց ստիպում են բոլորին անյապաղ ազատ արձակել: Եւ պատկերացրէք, այս երկեակը լաւ էլ համատեղում է սեփական բնագործների եւ միջազգային կառույցների պահանջները: Այսինքն՝ բոլորին բռնում է եւ անմիջապէս ազատ արձակում:

Բայց արդեօ՞ք կարելի է ամէն ինչ միայն բնագործ բացատրել: Բնագործ, իհարկէ, զօրաւոր բան է, բայց ամէն դէպքում՝ Ռոբերդ Քոչարեանի ու Սերժ Սարգսեանի գործողութիւններում նաեւ ինչ-որ տրամաբանութիւն պիտի լինի: Ուրեմն ինչո՞ւ են նրանք ամէն օր խաղաղ զբօսանքի ելած մի 20-30 քաղաքացիների «բերման ենթարկում»: Պատճառը շատ պարզ է: Նրանք հասկացել են, որ իրենց հիմնական հակառակորդը ոչ թէ կոնկրետ քաղաքական ուժ է, այլ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները: Եւ բնականաբար, պայքարում են հենց քաղաքացիների դէմ: Յատուկ ընդգծենք, որ «քաղաքացի» ասելով ոչ թէ մարդկանց իրաւական կարգավիճակը նկատի ունենք, այլ գիտակցութեան մակարդակը: Ռոբերդ Քոչարեանին ու Սերժ Սարգսեանին ոչ թէ քաղաքացիներ են պէտք, այլ բնակչութիւն: Ինչո՞ւ: Որովհետեւ «բնակչութիւնը», որպէս կանոն, ընդունում է խաղի կանոնները, զբաղւում է բացառապէս ուտելիքի հոգսով, սերիալ է նայում, կաշառք է տալիս, մի խօսքով՝ «եռլա է գնում», իսկ քաղաքացիները մի «փիս խասլաթ» ունեն՝ չեն համակերպւում ռեժիմի թելադրած խաղի կանոններին եւ պայքարում են իրենց քաղաքացիական իրաւունքների համար: Եւ պատահական չէ, որ ոստիկաններն ում բռնում են՝

«սպորինի միջոցառումներ կազմակերպելու» մեղադրանք են առաջադրում: Ենթադրաբար նրանք ճիշդ են վարում, որովհետեւ սա իսկապէս քաղաքացիական շարժում է, եւ մասնակիցներից իւրաքանչիւրն իսկապէս էլ կազմակերպիչ է:

Բայց իշխանութիւնների նենգութիւնը հենց այն է, որ նրանք միայն ձերբակալութիւններով չեն սահմանափակում: Զուգահեռաբար այլանդակ քարոզչութիւն է իրականացւում՝ իբր «տեսաչօք, ձեր Լեւոնն իր համար տանը հանգիստ նստած է, իսկ ձեզ ամէն օր տանում են քաղմաս: Բա ինչո՞ւ տնից դուրս չի գալիս, ինչո՞ւ է մենակ թողել ձեզ»: Իրականութիւնն այն է, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը տնային կալանքի տակ է, նրա թիմակիցների զգալի մասը ձերբակալուած է, միւսներն ընդատակում են, իսկ նրանք, ովքեր ազատութեան մէջ են, ամէն երեկոյ զբօսում են Հիւսիսային պողոտայում: Զուգահեռաբար, ամէն օր նրանք զանգուածային միջոցառումներ անցկացնելու յայտ են ներկայացնում, եւ բնականաբար, ամէն օր մերժում են ստանում: Բայց բոլորն էլ հասկանում են, որ այս վիճակը երկար շարունակուել չի կարող: Աւելին. իրավիճակն այնպիսին է, որ այս պահին կարելո՞րդ ոչ թէ այն է, թէ ինչ պիտի անի Տէր-Պետրոսեանի ղեկավարած շարժումը, այլ այն, թէ ինչ պիտի անեն իշխանութիւնները: Ամէն օր հանրահաւաքի թոյլտուութիւն մերժել չեն կարող, ամէն օր տասնեակ մարդկանց «բերման ենթարկել» չեն կարող, բայց չեն կարող նաեւ «բնականոն կեանքի» անցնել: Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանն անցել են այն սահմանագիծը, որից յետոյ վերադարձն այլեւս անհնար է:

Պատկերաւոր ասած, Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանն այսօր մօտաւորապէս Մարտի Մեծի Քրիստոսի արդէն հարուածել է, բայց Մեծի Քրիստոսը իրեն «թափ չի տուել» ու չի կիսուել, եւ հեռուից նայողին կարող է թուալ, թէ ամէն ինչ նորմալ է՝ նա իր տեղը հանգիստ կանգնած է: 20-օրեայ արտակարգ դրութիւնն ու դրա յետագայ փաստացի պահպանումը հենց նրա համար են, որ յանկարծ ոչ մի շարժում չլինի, ու ռեժիմը «մէջտեղից չկիսուի»: Բայց դա ընդամէնը ժամանակի խնդիր է:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ԲԱՅ ԱՉԵՐԴ, ԵՐՈՊԱ

ՐԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՖԱՇԻԶՄ Է

Այն, ինչ տեղի է ունենում Հայաստանում վերջին տասը տարիներին, ոչ այլ ինչ է, եթէ ոչ սովորական ֆաշիզմ՝ հետեւողականօրէն արմատաւորուող իր դրսեւորումներով:

Հայկական մամուլում եղել են մի քանի հրապարակումներ, որոնցում փաստարկուել են Հանրապետական կուսակցութեան եւ նացիոնալ-սոցիալիզմի գաղափարական ընդհանրութիւնները, բայց այդ հրապարակումները մնացել են անարձագանգ:

Մեր իրականութեան մէջ հասարակութիւնն առհասարակ չի արձագանքում մամուլի հրապարակումներին: Եթէ անգամ փոքրիկ վտանգ եւ, որ կարող է արձագանքել, ապա պոտենցիալ այդ արձագանքները օպերատիւ կերպով մարտնչում են հեռուստատեսութեան ամենակուլ երախում, որը հեքիաթային մեկամորֆոզով ժպտում է ամէնքիս Հ-ի «Հայրուրի» Տաթևիկ Բաղդասարեանի, Տ-ի «Լրաբերի» Գայանէ Փայտեանի կամ նրանց նմանակել փորձող այլոց շուրթերով: Այլ կերպ ասած, գէօքեյսեան քարոզչութիւնը պարզապէս ծամուծութիւն է ցանկացած անհաճոյ միտք, ցանկացած փաստ եւ հասարակութեան ստիպում է մարսել բացառապէս իր ծամած-թքածը:

Սա ֆաշիզմի ցայտուն դրսեւորում է՝ ամէն ինչ յարմարեցնել եւ ծառայեցնել իշխող կուսակցութեան գաղափարախօսութեանը:

ՀՀ աննկուն գաղափարակիր Տիգրան Թորոսեանը, որը աւելի քան տասը տարի զբաղւած է Հայաստանում նացիոնալ-սոցիալիզմի՝ ֆաշիզմի վերածնունդը նախապատրաստելու վատ թաքցուած գործունէութեամբ, եթէ չի գիտակցում իր գործունէութեան վտանգաւոր հետեւանքները, եթէ ՀՀ խորհրդի նախագահի ցատկահար Սերժ Սարգսեանը չի հասկանում, որ գոհերի արեան գնով իշխանութեան հասնելը ոչ մի լաւ բան չի խոստանում, ուրեմն առնուազն այս երկուսը յայտնուել են հիտլերեան մոլագարութեան եզրին:

Այն ամէնը, ինչ տեղի է ունենում Հայաստանում Մարտի 1-ից ի վեր՝ սպանութիւններ, համատարած բռնութիւններ, ձերբակալութիւններ, հայածանքներ, ահաբեկումներ, քարոզչական տեւոր, քաղաքացիների իրաւունքների սահմանափակումներ, շինծու մեղադրանքներ, սպառնալիքներ, պատժիչ գործողութիւններ, մարդատր-

սութիւն, հետապնդումներ՝ անցեալ դարի 20-30-40-ական թուականներին նոյն ձեւագրով եւ նոյն ցինիզմով կատարուել են իտալիայում, Գերմանիայում, ֆաշիզմի թոյնով վարակուած այլ երկրներում: Եւ եթէ եւրոպական դիտորդական առաքելութիւնները չեն արձանագրում նմանութիւնները, ապա մեզ թոյլ տանք կասկածել նրանց դիտորդականութեանը:

Մենք՝ հայերս, փաստում ենք այդ նմանութիւնը: Փաստում եւ առնուազն մեր տարակուսանքն ենք յայտնում, որ քաղաքակիրթ Եւրոպան կամ չի տեսնում, կամ չտեսնելու է տալիս ու հանդուրժում է ֆաշիզմի վերածնունդը առանձին վերցրած մի փոքրիկ երկրում, որը ընդամէնը տասը տարի առաջ նոյն Եւրոպայի գնահատականով ժողովրդավարութեան կղզեակ էր Հարաւային Կովկասում: Մենք հասկանում ենք, որ կենսամակարդակի խնդիր ունենք, եւ աշխարհի գերզարգացած երկրները իրենց թոյլ են տալիս կերակրել մեզ ժամկէտանց սննդամթերքով, բուժել ժամկէտանց դեղերով, բայց մեզ համար հասկանալի չէ, երբ նոյն այդ գերզարգացած երկրները աստիճանաբար հետեւում են, թէ ինչպէս է Եւրամիութեան նոր հարեանը կոչուելու պատիւը վաստակած Հայաստանում իր յաղթական մեկնարկը ազդարարում եւ իր ասպատակութիւնը սփռում ժամկէտանց ֆաշիզմը:

Մեզ մնում է ենթադրել, որ Եւրոպան եւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը չեն հանդուրժում միայն այն սպառնալիքները եւ աղետաբեր երեւոյթները, որոնք անմիջականօրէն վտանգում են իրենց: Մնացած այլ դէպքերում նրանք կոյր են:

«ՏԱՐԵԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄՄՆԻՍՏԻԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Ծրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ՊԱՍՏԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՍԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

Դեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՅԻՍԱՐ ԶԵՆ

ՀՀ գլխաւոր դատախազ Ալուան Յովսէփեանը մարտի 1-ի արիւնահեղութիւնից յետոյ մի ուշագրաւ շփում է ունեցել Հայաստանում հաւատարմագրուած Եւրամիութեան երկրների դեսպանների հետ, ովքեր հրաւիրուած են եղել գլխաւոր դատախազութիւն:

Մեր աղբիւրների վկայութեամբ, Յովսէփեանն այդ օրը փորձել է ցուցադրել մարտի 1-ին իրենց արած տեսաձայնագրութիւնը: Ըստ հաւաստի տեղեկութիւնների, ընդամէնը վայրկեաններ անց ՀՀ-ում Գերմանիայի դեսպանը դուրս է եկել սենեակից: Իսկ երբ Յովսէփեանը տեսախիթը ցուցադրելու 2-րդ փորձն է արել, հանդիպմանը ներկայ բոլոր

դեսպանները հետեւել են Գերմանիայի դեսպանի օրինակին եւ մէկը միւսի ետեւից հեռացել՝ Ա. Յովսէփեանին թողնելով միայնակ իր տեսախիթի հետ:

Գրող, հրապարակախօս Զորի Բալբեանը, ով իր տիկնոջ հետ անցել է Հիւսիսային պողոտայով, բաւական անյարմար վիճակի մէջ է յայտնուել: Քաղաքական զբօսանքի մասնակիցները սկսել են սուրբ Բալայեանին, ամօթանք տուել նրան եւ բացատրել են, թե ով է նա: Բալայեանը ստիպուած է եղել հապճեպ լքել Հիւսիսային պողոտան: Իսկ երէկուայ քաղաքական զբօսանքն արդեն չորրորդ անգամ աւարտուել է առանց

ձերբակալութիւնների:

Քաղաքական զբօսանքի մասնակիցներն արդեն մի քանի օր է կատակում են, որ չորսօրեայ այդ զբօսանքների հովանաւորն Ագոյի խումբն է:

Քաղաքացիների մի մասը զբօսանքի էր եկել թղթերով, որոնց վրայ կային տարբեր մակագրութիւններ: Ապրիլի 1-ի առթիւ մարդիկ իրենց վրայ էին կպցրել «Ես սիրում եմ Սերժ Սարգսեանին», «Կեցցէ՛ ոստիկանական պետութիւնը», «Ոչ մի թիզ ազատութիւն», «Նպատակն արդարացնում է միջոցները» գրատւթեամբ թղթեր: Նման թղթեր նրանք փակցրել էին նաեւ մի եղեւնու վրայ:

«ՀԱՅՎԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ԼՈՒՐԵՐ

3 ՏԱՐԻ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ 16 ՉԿՐԱԿՈՒԱԾ ՓԱՄՓՈՒՇՏԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Մարտ 31-ին 3 տարի ազատազրկման դատապարտուած երկրորդական, նախկին ազատամարտիկ, Վազգէն Սարգսեանի մարտական ընկեր, կառավարութեան անվտանգութեան ծառայութեան նախկին պետ Յուսիկ Բաղդասարեանը: Արարատի եւ Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրաւասութեան դատարանը/նստավայրը՝ Մասիս/, դատաւոր Ելենա Քոչարեանի նախագահութեամբ ամբողջութեամբ եւ անվերապահ բաւարարեց մարզի դատախազի տեղակալ Համլէտ Յակոբեանի միջնորդութիւնը՝ 3 տարի ազատազրկում: Նկատենք, որ ՀՀ քրէական օրէնսգրքի 235 յօդուածի առաջին մասը նախատեսում է պատիժ ինչպէս ազատազրկման տեսքով, այնպէս էլ տուգանքի, բայց դատարանը առանց հաշուի առնելու Յուսիկ Բաղդասարեանի ծառայութիւնները հայրենիքին, նրա մեղաւորներն ու շնորհակալագրերը, «պատժեց» Բաղդասարեանին առաւելագոյն պատժով, որ սահմանուած է տուեալ յօդուածով:



Յուսիկ Բաղդասարեանի հարազատները կը բողոքեն քաղաքականացուած դատավիճակի դէմ

«Նա եղել է Վազգէն Սարգսեանի, Արամ Սարգսեանի մերձաւորագոյն բարեկամը, Լեւոն Տէր-Պետրոսեանի համակիրը եւ դրա համար այսօր պատասխան է տալիս. սա քաղաքական գործ է, քաղաքական պատուէր. ներկայ իշխանութիւնների հերթական քաղաքական պատուէրը», - «Ա1+»-ի հետ զրոյցում ասաց քաղաքացի Սուսաննա Հասարթեանը, որի ձեռքում պատու էր «Ազատութիւն Յուսիկ Բաղդասարեանին» բովանդակութեամբ:

Իսկ դատախազը իր միջնորդութիւնը պատճառաբանեց հասարակական վտանգաւորութեան աստիճանով, իսկ երկակի ստանդարտների մասին դժուարացաւ որեւէ բան ասել, երբ նշեցինք, որ նոյն մեղադրանքով մի դէպքում դատախազութիւնը պահանջում է ազատազրկում 2 տարի ժամանակով, միւս դէպքում՝ 3: «Սա ծանր յանցագործութիւն չի, հաշուի է առնուել հասարակական վտանգաւորութեան աստիճանը», - ասաց դատախազ Համլէտ Յակոբեանը: Նա նկատեց, որ առգրաւուած գէնքը «Տիգր» տեսակի որսորդական հրացան է, իսկ փամփուշտները ոչ թէ որսորդական, այլ մարտական են: Յուսիկ Բաղդասարեանը պնդում էր, որ դրանք որսորդական հրացանի փամփուշտներն են եղել. «Խանութիւնում վաճառում են այդ փամփուշտները, իրենք ասում են, որ հիմա դրանք համարում են մարտական փամփուշտներ, եթէ փոխուել է, թող խանութում չվաճառեն, մենք էլ չգնենք», - ասաց Յուսիկ Բաղդասարեանի կինը՝ Մարինէ Բաղդասարեանը եւ աւելացրեց, որ Յուսիկը որսորդմիութեան անդամ է:

«ՍՕՏ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԵԱԿ ԿԱԼԱՆԱՒՈՐՈՒԱԾՆԵՐ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ ԵՆ ՀԱՅԱԴՈՒԼ ՍԿՍԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Մօտ երկու տասնեակ կալանաւորուածներ, որոնք ձերբակալուել էին Հայաստանում յետընտրական գաղթացումների առնչութեամբ, Ապրիլ 1-ին յայտարարել են, որ մտադիր են հացադուլ սկսել: Այդ մասին «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնել է Լեւոն Տէր-Պետրոսեանի գրասենեակի ներկայացուցիչ Արմէն Խաչատրեանը:

Պետրոսեանի գրասենեակից ստացուել է 20 կալանաւորուածների յայտարարութիւնը, որտեղ, մասնաւորապէս, ասուած է. - «Եթէ անյապաղ չվերանայուեն մեզ մեղսագրուած յանցագործութեանները, մենք՝ քաղաքական բանտարկեալներս, Ապրիլի 2-ից մէկօրեայ հացադուլ ենք յայտարարելու, իսկ Ապրիլի 9-ից՝ անժամկէտ»:

Նրանց թուում են Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական շտաբի նախկին ղեկավար Ալեքսանդր Արզումանեանը, պատգամավոր Միասնիկ Մալխասեանը, Հայոց Համագային Շարժման վարչութեան նախագահ Արարատ Զուրաբեանը, Սմբատ Աջվազեանը, Մուշեղ Սաղաթեանը, Կարապետ Ռուբինեանը, Գուրգէն Եղիազարեանը, Պետրոս Մակեանը եւ այլք:

Նրանք պնդում են, թէ կալանաւորուել են քաղաքական պատճառներով եւ պահանջում են կարծել իրենց նկատմամբ հարուցուած քրէական գործերը:

Միաժամանակ, Լեւոն Տէր-

Լստ Հայաստանի արդարադատութեան նախարարութեան քրեակատարողական վարչութեան պետի մամլոյ քարտուղար Արսէն Բաբեանի տարածած հաղորդագրութեան, կալանաւորուած անձանցից միայն Սուրէն Սուրենեանցն ու Վարդգէս Գասպարեանն են հացադուլ յայտարարելու վերաբերեալ դիմում ներկայացրել քրէակատարողական հիմնարկի պետին: Ապրիլի 2-ից, հաղորդագրութեան համաձայն, մէկօրեայ նախազգուշական հացադուլ սկսելու մասին դիմում է ներկայացրել նաեւ Ազգային ժողովի նախկին փոխնախագահ Կարապետ Ռուբինեանը:

ՀԱԿԱՅԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԶԵԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Չնայած խոչընդոտներին՝ ՄԴՀԿ «Սարգիս Տիրունի» ուսանողական-երիտասարդական միութեանը յաջողուեց քննարկել ՄԱԿ-ի ընդունած բանաձեւը:

Մարտ 28-ին ՄԴՀԿ «Սարգիս Տիրունի» ուսանողական-երիտասարդական միութիւնը սեմինար էր կազմակերպել՝ «ՄԱԿ-ի ընդունած հակահայկական բանաձեւ. քաղաքական հետեւանքներ» թեմայով: Այն պիտի անցկացուէր «Կոնգրէս» հիւրանոցում, սակայն հիւրանոցից հրաժարուել էին երիտասարդներին դահլիճ տրամադրել՝ մերժումը պատճառաբանելով տեխնիկական խնդիրներով: Ուստի սեմինարն անցկացուեց ՄԴՀԿ «Սարգիս Տիրունի» միութեան կենտրոնական գրասենեակում: Կատարուածի մասին միութեան ատենապետ Նարեկ Գալստեանն ասաց. «Այս դէպքում ամէն ինչ 2 հոգու հետ է կապուած: Դեռ մէկ շաբաթ առաջ հիւրանոցի հետ պայմանաւորուել էինք, որ այնտեղ մի միջոցառում ենք կազմակերպելու, սակայն յայտնի դարձաւ, որ մեր «ժողովրդավար» իշխանութիւնները չեն ուզում քննարկում տեղի ունենայ, նոյնիսկ, եթէ այն երիտասարդական է, վերլուծական»: Յետոյ էլ «Սարգիս Տիրունի» իրենց սփիւռքահայ ընկերներին եւ իրաւապաշտպան կազմակերպութիւններին կոչ արեց՝ այսուհետեւ «Կոնգրէս» հիւրանոցում չհիւրընկալուել եւ նոյն հիւրանոցում որեւէ քննարկում չկազմակերպել:

բանաձեւի կէտերին, որոնք վերաբերում էին Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան ճանաչմանը, օկուպացուած տարածքներից հայկական ուժերի դուրսբերմանը եւ այլն: «Բանաձեւի ընդունման հարցում չեմ կարող մեղադրել միայն ԱԳՆ-ին, չնայած նա պիտի ընդունէր հայեցակարգեր եւ միւս կառույցներին դրդէր կատարել դրանք: Միւս կողմից էլ վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ նախագահը պիտի ամենից շատ շահագրգռուած լինէր արձանագրելու դարաբաղեան յաղթանակը: Սակայն նահանջը դա արձանագրելուց այնքան զգալի է, որ կարող եմ ասել՝ մեղքը հենց Ռոբերտ Քոչարեանինն է», - շեշտեց Վ. Շիրխանեանը:

Չնայած բոլոր խնդիրներին, քննարկումը տեղի ունեցաւ: ՄԴՀԿ ներկայացուցիչ ՊՆ նախկին փոխնախարար Վահան Շիրխանեանը գեկուցեց «Ղարաբաղ. ուղղակի յաղթանակ եւ դիւանագիտական պարտութիւն» թեմայով: Նա անդրադարձաւ ՄԱԿ-ի ընդունած, իր բնորոշմամբ, հակահայկական բանաձեւին. «1992-ին ընդունուած ՄԱԿ-ի բոլոր բանաձեւերում Հայաստանը որպէս կոնֆլիկտային կողմ չկար, իսկ այսօր ՀՀ-ն արդէն ոչ միայն կողմ է, այլեւ՝ ագրեսոր»: Վ. Շիրխանեանը ՄԱԿ-ի բանաձեւի ընդունումը համարեց ՀՀ դիւանագիտական պարտութիւնը. «Ասում են, թէ միայն մոլուսումնական երկրներն են կողմ քուէարկել բանաձեւին: Եթէ Ատրպէյճանը կարող էր համախմբել նրանց, ի՞նչն էր մեզ խանգարում՝ համամբել քրիստոնեայ երկրներին եւ մոլուսումնականներին մէջ գտնել կողմնակիցների»: Յետոյ նա անդրադարձաւ

Քաղաքագէտ Ստեփան Գրիգորեանն էլ նկատեց. «Այս բանաձեւի ընդունումը կապուած է մեր երկրի այսօրուայ թոյլ վիճակի հետ: Եթէ քաղաքատարկեալների հարցով Ատրպէյճանը միշտ մէկ քայլ հետ էր, ապա այսօր այդպէս չէ: Նրանց քաղաքատարկեալների թիւը չի գերազանցում 15-ը, իսկ մեզ մօտ մարտի 1-ից յետոյ բոլոր ձերբակալուածները քաղաքատարկեալ են: Դրա մասին առաջինը յայտարարել է ՀՀ դատախազութիւնը»: ԱԳՆ միջազգային կազմակերպութիւնների վարչութեան պետ Ջիւնիկ Աղաջանեանն էլ պարզաբանեց բոլոր հնչած մտահոգութիւնները: Նա տեղեկացրեց. «Այս բանաձեւը որեւէ քննարկման չի դրուել ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլեայում: Ըստ Գլխաւոր ասամբլեայի լիազուծար նիստերի, դա հնարաւորութիւն է: Անդամ երկիրը կարող է առաջարկել իր բանաձեւը՝ նախագիծը նախ դնելով քննարկման: Իսկ Ատրպէյճանը հասկացաւ, որ ցանկացած քննարկում կարող է տապալել բանաձեւի ընդունման հնարաւորութիւնը եւ գնաց առանց որեւէ ստորակէտի բանակցման փաստաթուղթը ընդունման ներկայացնելու: Իսկ մեր մշտական ներկայացուցիչը յստակ նշել է, որ այդ կէտը ցոյց է տալիս ատրպէյճանական կողմի կարծրացած դիրքորոշումը»: Յետոյ էլ յաւելեց. «Մեր դիւանագիտական յաղթանակն էր այն, որ բանաձեւին դէմ քուէարկեց Միւսկի խմբի համանախագահ երկրների ամբողջ կազմը: Սա նշանակում է, որ բանաձեւն այսօր Միւսկի խմբում ընթացող գործընթացներին լիովին հակասում է»:

«ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՅԼԵԻՍ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ԱՅԼ ՄԻԶՈՑ ՉԵՆ ՏԵՍՆՈՒՄ, ՔԱՆ ԲՈՒՆՈՒԹԻՒՆԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական շտաբի նախկին անդամ, առաջին նախագահի նախկին խօսնակ Լեւոն Զուրաբեանը, որը տարուել է ռադիոկայանին, «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում ասել է, թէ «իշխանութիւններն այլեւս կառավարելու այլ միջոց չեն տեսնում, քան բռնութիւնը»:

Նա նաեւ յայտնել է, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակիցները ամէն օր դիմում են քաղաքապետարան հանրահաւաք անցկացնելու թոյլտուութիւն ստանալու համար, սակայն մերժում են:

«Կը հաւաքենք այս փաստաթղթ-

թերը, կը դիմենք համապատասխան ատենաներին, փորձելով բոլոր իրաւական, դատական միջոցներով լուծել իրավիճակը: Սակայն ոչ ոք չի կարող հանդուրժել պետութեան մէջ մի իրավիճակ, որ իշխանութիւնները ընդհանրապէս մերժեն հանրահաւաք անցկացնելու ժողովրդի օրինական իրաւունքը», - կարծիք է յայտնել Զուրաբեանը:

Նրա պնդմամբ՝ ներկայումս շատ երիտասարդներ են դիմում անդամագրուելու համար այն կուսակցութիւններին, որոնք սատարել են Լեւոն Տէր-Պետրոսեանին: Զուրաբեանը մատնանշել է, մասնավորապէս, Հնչակեան կուսակցութիւնը:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍԱՀԷԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՐԱՅԱՍՏԱՆ

ԱՄՆ-Ն ՄՏԱՐՈՒԹՅԱԾ Է, ԲԱՅՑ ՅՈՅԱԸ ՉԻ ԿՈՐՑՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ԱՄՆ-ն մտահոգուած է վերջին երկու ամիսներին Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւններով, այսօր այս մասին յայտարարեց Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակաւոր հաւատարմատար ժողովի փոխնախագահ Դեյվիդ Քեյնը: Նա նկատեց, որ մի շարք թերութիւններ են նկատել ՀՀ իշխանութիւնների ժողովրդավարական ուղով առաջնորդելու հարցում: ԱՄՆ կառավարութիւնը մտահոգուած է ինչպէս ընտրութիւնների ժամանակ տեղ գտած թերութիւններով, քուէարկութեան օրը տեղի ունեցած բռնութեան փաստերով եւ վերահաշվարկի ընթացքում արձանագրուած խախտումներով, այնպէս էլ արտակարգ դրութեան յայտարարմամբ մարդու իրաւունքների ոտնահարման, մամուլի ազատութեան սահմանափակման, քաղաքական գործիչների ձերբակալութիւնների փաստերով:



Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակաւոր հաւատարմատար ժողովի փոխնախագահ Դեյվիդ Քեյնը

«Մենք սատարում ենք ժողովրդավարութեան կայացումը Հայաստանի Հանրապետութիւնում, բայց այս պահի վարկածները մեզ անհանգստացնում են», - ասաց Փենինզիլթոնը: Նա նկատեց, որ համերկեան մշակութային յարաբերութիւններն այնքան խորն են, որ դրանք չեն տուժի որեւէ պարագայում: «Բայց քաղաքական ասպարէզում վերջին իրադարձութիւնները Ուաշինգտոնին մտահոգուելու առիթ են տուել», - ընդգծեց Փենինզիլթոնը եւ չի էջերեց, որ այդ մտահոգութիւնների մասին «Հազարամեակի մարտահրաշխան» կորպորացիայի ղեկավար, դեսպան Ջոն Դանիլովիչը գրել է Ռեբերդ Քոչարեանին ուղղուած նամակում: Փենինզիլթոնը նկատեց, որ ժողովրդավարութեան նահանջ եւ վատ միտումներ առկայ էին դեռ մինչեւ վերջին դէպքերը՝ հիմնականում անարդարացի կառավարման, կոռուպցիայի, մամուլի ազատութեան սահմանափակման եւ ժողովրդավարական այլ ինստիտուտների կայացման ոլորտներում:

Ի դէպ, «Հազարամեակի մարտահրաշխան» ծրագրի գործունէութեան կասեցման մասին վերջնական որոշում դեռեւս կայացուած չէ, իսկ պատճառն այն է, որ ԱՄՆ-ն յոյսեր է կապում ՀՀ նոր իշխանութիւնների հետ, որովհետեւ վարչապետ Սերժ Սարգսեանը բաւականին յուսադրող խոստումներ է տուել, եւ եթէ դրանք կատարուեն ու Հայաստանը վերադառնայ դէպի ժողովրդավարական ուղի, իրենք կ'ողջունեն եւ կը շարունակեն ֆինանսաւորումը՝ «Հազարամեակի մարտահրաշխան» ծրագրի շրջանակներում: Ժողովի փոխնախագահը յայտարարեց, որ «արդարացուած կը լինի, եթէ նոր նախագահին ժամանակ տրուի իրավիճակը շտկելու: Եթէ բացասական միտումները շտկուեն եւ դրական քայլեր նկատ-

ուեն՝ ծրագիրը կը շարունակուի»: ԱՄՆ գործերի ժամանակաւոր հաւատարմատարը յայտարարեց, որ իրենք մտահոգուած են այսօր էլ խաղաղ գրգռող մարդկանց ոստիկանութեան բաժիններ տանելու փաստով, բայց նաեւ տեղեկանում են, որ նրանք չուտով ազատ են արձակուած: Ամերիկացի դիւանագետը վստահեցրեց, որ չի հասկանում քաղաքացիներին բաժիններ տանելու իմաստը: Ինչ վերաբերում է հարիւրից աւել ազատագրուած քաղաքացիներին ու քաղաքական գործիչներին, ապա ամերիկացի դեսպանի գնահատմամբ, նրանք, ովքեր քաղաքական հայեացքների համար են հետապնդուած, պէտք է ազատ արձակուեն, իսկ քրէական յանցագործութիւն կատարածները՝ խանութիւններից կողոպուտ ու «Չարդեր» իրականացրածները, պէտք է օրէնքով պատասխանատուութեան ենթարկուեն: Ժողովի փոխնախագահը պատասխանելով հարցին, թէ մասնակցելու է Սերժ Սարգսեանի երդմնակալութեան արարողութեանը, տեղեկացրեց, որ այդ մասին դեռեւս որոշում չկայ:

Իսկ թէ ինչու Ջորջ Պուշը չի շնորհաւորում Սերժ Սարգսեանին նախագահ ընտրուելու կապակցութեամբ, ժողովի փոխնախագահը պատասխանեց, որ ընտրութիւններից յետոյ ԱՄՆ պետդեսպարտամենտը շնորհաւորել է հայ ժողովրդին՝ մրցակցային ընտրութիւններ ունենալու համար: «Ես չեմ կարող ենթադրել, թէ Սպիտակ տունը ինչ կարող է անել, կամ ինչ ոչ, բայց ԱՄՆ կառավարութիւնը պատրաստ է աշխատել ՀՀ նոր ղեկավարութեան հետ, Հայաստանը ժողովրդավար ուղով տանելու համար», - ասաց Փենինզիլթոնը: Իսկ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանի անունը դեռեւս յայտնի չէ: Սպիտակ տունը դեռ չի ներկայացրել իր թեկնածուի անունը, եւ այդ գործընթացը դեռ երկար կը տեւի, ներկայացումից յետոյ դեռ նրա թեկնածութիւնը պէտք է հաստատուի Սենատում:

DVD-Ն ՅԱՍԵԼ Է ՍԱՐԿՈՋԻՆ

Հաւատեղեակ աղբիւրներից մեզ յայտնի է դարձել, որ Մարտի 1-ին առաւօտից մինչեւ ուշ գիշեր ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան տարածքից մանրամասնօրէն նկարահանուել են Ֆրանսիայի դեսպանատան առաջ եւ դրա մերձակայք հրապարակուած տեղի ունեցող իրադարձութիւնները: Ըստ մեր աղբիւրների, դեսպանատան ներկայացուցիչը տեսագրութիւնը շտապ հասցրել է Եւրոխիստեան պալատ, եւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին անձամբ դիտել է այդ կադրերը: Ըստ մեր աղբիւրների, տեսածը Սարկոզիին բոլորովին դուր չի եկել, նա մեղադրել է իր աշխատակազմին՝ Սերժ Սարգսեանին իր անունից շտապ շնորհաւորանք ուղարկելու համար: Այնմիջապէս սրանից յետոյ է, որ եւրոպական այն կառույցները, որտեղ Ֆրանսիան առանցքային դերակատարում ունի, սկսել են մէկը միւսի ետեւից կոշտ յայտարարութիւններ անել ՀՀ-ում կատարուածի վերաբերեալ: Խօսքը, առաջին հերթին, Եւրամիութեան մասին է, որի նախագահութիւնը մարտի 4-ին հանդէս եկաւ յատուկ յայտարարութեամբ, իսկ Եւրոպական խորհրդարանն ընդունեց յատուկ բանաձեւ:

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ

Շարունակուած էջ 1-էն

դարձութիւններու կապակցութեամբ անկողմնակալ «ազգային հետաքննութիւն» կատարել: «Հետաքննութեան մանրամասնութիւնները մեր գործը չէ, սակայն այն պէտք է ըլլայ ոչ թէ մէկ մարմինի, ըսենք՝ գլխաւոր դատախազութեան կողմէ, այլ ազգային՝ ընդգրկուն, լայն վստահութեան դաշտ ապահովող քննութիւն», - ըսաւ Սիորգեն: Ազգային խումբի 5-րդ առաջարկը կը վերաբերի երթերու, ցոյցերու, հաւաքներու մասին օրէնքին մէջ կատարուած փոփոխութիւններուն, որ Ազգային ժողովը ընդունեց արտակարգ դրութեան ժամանակ եւ որ կ'արգիլէ Հայաստանի մէջ երթեր, ցոյցեր եւ հանրահաւաքներ կազմակերպելը: Պէր Սիորգեն ափսոսանք յայտնեց, որ այդ օրէնքը ընդունուեցաւ առանց վեներտիկի յանձնաժողովի փորձաքննութեան եւ ըսաւ. «Վեներտիկի յանձնաժողովը հրատապ փորձաքննութեան ենթարկուած է արդէն ընդունուած օրէնքը եւ ունի քննադատական գնահատականներ, որոնք արդէն ներկայացուած են արդարաւորութեան նախարարութեան: Իսկ վերջին առաջարկը՝ 6-րդը, կը վերաբերի իշխանու-

թիւններու եւ ընդդիմութեան միջեւ առանց նախապայմաններու երկխօսութիւն ծաւալելն է:

Լրագրողները նկատեցին, որ Ազգային խումբի առաջարկներէն կը բացակայի Եւրոպայի Խորհուրդի նախկին կատարած յայտարարութեան այն կէտը, որ ընդդիմութեան խորհուրդ կու տար ճանչնալ՝ Սահմանադրական Դատարանի որոշումը եւ Փետրուարի 19-ի ՀՀ նախագահի ընտրութեան արդիւնքները պահել անփոփոխ:

«Երկխօսութեան վերսկսումն է կարելոյ, իսկ Սահմանադրական Դատարանի որոշումը երկխօսութեան առանցքային կէտերէն մէկն է: Մեր առաջարկները պէտք է դիտարկել ապագային միտուածութեան տեսանկիւնէն», - ըսաւ Պէր Սիորգեն:

Մարտ 30-ին Ազգային խումբի հանդիպում ունեցած է Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ, քննարկելով Հայաստանի մէջ ստեղծուած իրավիճակը եւ անկէ դուրս գալու հնարաւոր ելքերը:

Լեւոն Տէր-Պետրոսեան վերահաստատած է իր հաւատարմութիւնը Եւրոպայի Միութեան Նախագահութեան ներկայացուցած առաջարկներուն, զայն նկատելով իրավիճակէն դուրս գալու լաւագոյն միջոցը:

ԱՐԴԱԿԱՐԳ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՆԵԼԸ ԽԱՐԿԱՆՔ ԷՐ

Շարունակուած էջ 1-էն

Յայտարարութիւնը կը տեղեկացնէ, որ կը շարունակուին նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանի վստահութեամբ անձերու, նախըտրական շտաբներու անդամներու եւ ղեկավարներու ձերբակալութիւնները: «Այս ամէնը ցոյց է տալիս, որ ապօրինի ու յանցագործ ռեժիմը, հասկնալով, որ ժողովրդի մէջ չունի դոյզն իսկ սոցիալական եւ քաղաքական յենարան, ահաբեկութիւն կառնել է դեռեւս ձեռքի տակ եղած միակ՝ բռնութեան միջոցին: «Այնչափ է նաեւ, որ այսօրինակ ջղաձգումները աւելի են խորացնում ու համատարած դարձնում հասարակական ատելութիւնն ու զայրոյթը, ամբապնդում այս վարչախմբի հետ անհամատեղելիութեան գիտակցութիւնը, հեղինակագրկում պետական կարեւորագոյն կառույցները՝ ոստիկանութեանը, ԱԱԾ-ն բանակը եւ այլն: «Մենք վերահաստատում ենք մեր հաւատարմութիւնը ներքին քաղաքական իրավիճակի կարգաւորման ծրագրին՝ հիմնուած Եւրոմիութեան Նախագահութեան Մարտի 4-ի յայտարարութեան մէջ արուած սկզբունքային առաջարկ-

ներին. այն է՝ ազատ արձակել բոլոր ձերբակալուածներին, ապահովել տեղեկատուութեան հաւասար հնարաւորութիւններ, իրականացնել Մարտի 1-ի իրադարձութիւնների միջազգային անկախ հետաքննութիւն եւ միայն դրանից յետոյ երկխօսութիւն սկսել իշխանութեան հետ», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Յայտարարութիւնը ստորագրած են «Ազատութիւն», Ազգային արժէքների պահպանման, «Ազգային վերածնունդ», «Երրորդ Հանրապետութիւն», «Ժառանգութիւն», «Ժողովրդավարական ուղի», «Ժողովրդավարական հայրենիք», Հայաստանի առաջադիմական ազատական, Հայաստանի աշխատաւորական սոցիալիստական, Հայաստանի ժողովրդական, Հայաստանի մարքսիստական, «Հայոց հայրենիք», «Հայոց Համագային Շարժում», «Հայրենիք եւ Պատիւ», «Հանրապետութիւն», «Մարդու իրաւունքներ - 96», «Նոր ժամանակներ», Պահպանողական, Սոցիալ-դեմոկրատական Հնչակեան, «Քրիստոնեակ-ժողովրդավարական վերածնունդ» կուսակցութիւնները եւ «Այլընտրանք» հասարակական-քաղաքական նախաձեռնութիւնը:

ՍԱՆՈՒԷԼ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ ԱԶԱՏՈՒԵԼ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՕՆԻՑ

Ռեբերդ Քոչարեանի հրամանագրով Մանուէլ Գրիգորեանը ազատուել է Հայաստանի պաշտպանութեան նախարարի տեղակալի պաշտօնից: Սերժ Սարգսեանը, մարտի 13-ին պատասխանելով համացանց օգտագործողների եւ քաղաքացիների հարցերին, մասնաւորապէս, ասել էր. - «Գեներալ Մանուէլ Գրիգորեանը իմ մարտական ընկերն է: Աւելին, նրա կիրքը՝ Նազիկը, եւս մեզ հետ հաւասար կուտու էր այն ժամանակ: Եվ ես երբեք չեմ փորձել Մանուէլ Գրիգորեանին ներքաշել քաղաքականութեան մէջ: Եվ շատ-շատ ափսոսում եմ եւ ցաւում եմ, որ նա, չգիտեմ ինչից ելնելով, փորձեց մտնել քաղաքականութիւն եւ փորձ արեց չենթարկուել Գերագոյն գլխաւոր հրամանատարին: Ես կարծում եմ, պէտք է հանգամանքները պարզուեն, եւ ինդիքը պէտք է լուծուի ստանալ»:

ՐԱՅԱՍՏԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ես՝ Գուրգէն Եղիազարեանս, անուամ եմ քաղաքական յայտարարութիւնն աչն մասին որ՝

1. Անհիմն եմ համարում եւ չեմ ընդունում ս. թ. մարտի 1-ին՝ ժամը 6-ի սահմաններում Երեւանի Ազատութեան հրապարակում խաղաղ նստացոյցի մասնակիցները վրայ իշխանութիւնների կողմից չզգուշացուած եւ ապօրինի ուժային յարձակումն ու դրան հետեւած ձերբակալութիւնները:

2. Իմ անձի նկատմամբ կատարուած եւ կատարուող բոլոր գործողութիւնները համարում եմ ապօրինի գնահատում դրանք՝ որպէս Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն իշխանութեան կողմից իրաւապահներին տրուած քաղաքական պատուէրի իրականացում, որն իմ անձի նկատմամբ սկսուել է դեռեւս 5-6 տարի առաջ եւ իր բոլոր գործարարները ապրել մէկ տարի առաջ՝ կապուած թերթերում իմ հակաիշխանական սուր հրապարակումների հետ, որի արդիւնքում փորձ արուեց ինձ վրայ քրէական գործ յարուցել: Այս ամէնի իշխանական «տրամաբանական» աւարտը տեղի ունեցաւ 2008 թուականի Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւնների ժամանակ, երբ տեղի ունեցաւ յարձակում իմ եւ Երջանիկ Աբգարեանի վրայ:

Փետրուարի 26-ին՝ ժամը 7-ի սահմաններում, բնակարանս եւ ամառանոցս խուզարկուեց յետոյ, ժամը 11-ին ինձ տեղափոխուեց եւս Աբովեան քաղաքի ոստիկանութիւն, որտեղ անհիմն եւ առանց պատճառաբանութիւնների պահուեց եւս մինչեւ ժամը 18-ը: Աբովեան քաղաքի ոստիկանութիւնում մօտ 3 ժամ 40 րոպէ ինձ մեկուսացրել են այնպիսի խցում, որտեղ ջերմաստիճանը չէր անցնում 5-10 աստիճանը, որից յետոյ ձեռնաշղթայուած տեղափոխուել եւս ԱԱԾ եւ առանց բացատրութեան բաց են թողել ժամը 21.30-ին:

Այդ ընթացքում հեռուստատեսութեաբ յայտարարում են, որ ինձ փնտրում են եւ չեն գտնում...

3. 26.02.08 թուականին կատարուել է երկու խուզարկութիւն մէկ օրում:


4. 2.03.08 թուականին կատարուել է երրորդ խուզարկութիւնը:

5. 3.03.08 թուականին ձերբակալուել եմ եւ հարցաքննուել՝ որպէս կասկածեալ ՀՀ քր. օր-ի 300 յօդուածով:

6. 5.03.08 թուականին մեղադրանք է առաջադրուել նոյն յօդուածով, որին յաջորդուել է իմ նկատմամբ կալանքը, որպէս խափանման միջոց ընտրելու միջնորդութիւնը դատարան, որը անմիջապէս բաւարարուել է:

7. Մարդու իրաւունքների հեռախօսագրով զգուշացուել է կատարուող իրադարձութիւնների մասին, եւ ինդորում ենք ընդունելութիւն երեք հոգով՝ ես, «Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան» կուսակցութեան ատենապետ Լիւզմիլա Սարգիսեանը, «Հայրենիք եւ Պատիւ» կուսակցութեան նախագահ Գառնիկ Մարգարեանը, որը, բնականաբար, մերժուել է:

Սոյն յայտարարութեան համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ ինձ մեղադրուող արարքի հետ ես որեւէ առնչութիւն չունեմ եւ այս ամէնը համարում եմ իշխանութիւնների



Քաղ. բանտարկեալ՝ Գուրգէն Եղիազարեան

կողմից իջեցուած քաղաքական պատուէր ու փաստում, որ Հայաստանում ընդհանրապէս չի գործում պաշտպանութեան որեւէ էֆեկտիւ միջոց:

Աւելորդ եմ համարում քաղաքական սոյն յայտարարութիւնը ՀՀ որեւէ պետական կառուց ուղղարկելը:

Միեւնոյն ժամանակ յայտարարում եմ, որ մինչ յաղթանակ պաշտպանելու եմ յաղթած նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին, նրա քաղաքական հայեացքները եւ համարում եմ, որ միայն նա է ունակ փրկելու Հայաստանի ապագան:

ԱԱԾ մեկուսարանում գտնուող Գուրգէն Եղիազարեան Բաղ. բանտարկեալ՝ *****

ԳՈՒՐԳԷՆ ՀԱՄԱՐՁՈՒՄԻ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

- Ծնուել է 1948 թ. Սեպտեմբերի 29-ին Երեւանում, մանկավարժի ընտանիքում:

- 1966 թ. աւարտել է Երեւանի թիւ 19 միջնակարգ դպրոցում:

- Աշխատանքային կենսանդրութիւնը սկսել է աշակերտական տարիներից՝ սկզբում ամառային արձակուրդներին, իսկ յետոյ Երեւանի պետհամալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում սովորելու գուղընթաց աշխատել է որպէս ամրանագործ բանուոր:

- 1973 թ. աւարտել է պետհամալսարանն ու գորակոչուել խորհրդային բանակ: Ծառայել է հեռաւոր Արեւելքում՝ Սախալինի գործարարութեամբ:

- 1974 թ. գորացրուելուց յետոյ անցել է քաղաքական աշխատանքի:

- 1975 թուից ծառայութեան է մտել ՀՀ ՆԳՆ Համակարգում, աշխատել է որպէս քրէական հետախուզութեան տեսուչ, քրէական հետախուզութեան բաժանմունքի պետ: Ղեկավարել է ՆԳՆ համակարգի 7-րդ եւ քրէական հետախուզութեան վարչութիւնները:

- 1988-90 թ.թ. ունկնդրել է ԽՍՀՄ ՆԳ ակադեմիայի 1-ին ֆակուլտետում, որը կազմել էր պատրաստում դեկավար պաշտօններում աշխատելու համար: Ստացել է իրաւաբանի որակաւորում:

- Ակադեմիան աւարտել է գերազանցութեան դիպլոմով եւ 1990 թուից աշխատանքը շարունակել է ՀՀ ՆԳ նախարարութիւնում:

- 1994-95 թ.թ. աշխատել Ազգային անվտանգութեան համա-

«ԿԱՐԾԵՍ ԹԵ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ԽՈՒՆՏԱՅԻ ԵՐԿԻՐ ԼԻՆԻ»

Մամուլում հրապարակուել է, որ ապրիլի 9-ին ժամը 15:00-ին Ազատութեան հրապարակում նախատեսուել է անցկացնել զօրահանդէս: ՀՀ պաշտպանութեան նախարար Միքայէլ Յարութիւնեանը զօրահանդէս անցկացնելու մասին հրամանի մէջ Ազատութեան հրապարակը չի շատակել է չակերտների մէջ: Նոյն օրը նախատեսուել Սերժ Սարգսեանի երդման արարողութիւնը զօրահանդէսով ճոխացնելու նպատակով պաշտպանութեան նախարարի արձակած հրամանն ունի 14 կէտ: Դրանց, ինչպէս նաեւ զօրահանդէսի անցկացման վայրի ընտրութեան առնչութեամբ մեկնաբանութիւններ ինդրեցինք ՀՀ պաշտպանութեան նախկին նախարար Վահան Շիրիսեանից: Նա նախ ասաց, որ երբեք Ազատութեան հրապարակում որեւէ զօրահանդէս չի անցկացուել:



ՀՀ պաշտպանութեան նախկին նախարար Վահան Շիրիսեան

-Պարոն Շիրիսեան, Ազատութեան հրապարակում զօրահանդէս անցկացնելու որոշումը, Ձեր գնահատմամբ, ինչո՞վ է պայմանաւորուած:

-Բնական է, որ իրենք մտաւախութիւն ունեն, որ այդ օրը Ազատութեան հրապարակում կը հաւաքուի բողոքող մասսա: Եւ որոշել են զբաղեցնել Ազատութեան հրապարակը մէկ այլ միջոցառումով: Ինչքա՞ն է այդ մտայղացումը հաջող՝ ցոյց կը տայ ապրիլի 9-ը: Բայց ինձ թւում է, որ զինուած ուժերին այդքան ներքաշել այդ քաղաքական խաղի մէջ, ոչ մի իմաստ չունէ:

-Իսկ առհասարակ հնարաւոր է զօրահանդէս անցկացնել Ազատութեան հրապարակում՝ հաշուի առնելով հրապարակու տարածքի նպատակայարմարութիւնը: Նախորդ բոլոր դէպքերում զօրահանդէսներն անցկացուել են Յանրապետութեան հրապարակում:

-Հանրապետութեան հրապարակում անցկացուել են մեծ զօրահանդէսներ, երբ մասնակցում են հազարաւոր մարդիկ, հազարաւոր զինուորներ եւ բազմաթիւ տեխնիկա: Կատեղ նման բան չի լինի, կը լինի փոքր ստորաբաժանում, գունդ կամ ծայրայեղ դէպքում, մի բրիգադ: Ինչ-որ բաներ կարելի է կազմակերպել, իհարկէ, բայց մտայղացումը, ինձ թւում է, շատ անյաջող է:

-Պաշտպանութեան նախարարի հրամանով զօրահանդէսի հրամանատար է նշանակուել ՁՈՒ գլխաւոր շտաբի պետի առաջին տեղակալ Ապրիանով: Ո՞ր կարգի զօրահանդէսի դէպքում է հրամանատար նշանակուել ՁՈՒ գլխաւոր շտաբի պետի տեղակալը, եւ ոչ թէ պետը կամ պաշտպանը:

կարգում որպէս փոխնախարար: Ազգային անվտանգութիւնից դուրս է եկել իր դիմումի համաձայն: -1999 թ. անձամբ կարէն Դեմիրճեանի նախաձեռնութեամբ ընդգրկուել է «Միասնութիւն» դաշինքի համամասնական ցուցակներում եւ դարձել է ՀՀ ԱԺ պատգամաւոր, ԱԺ պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ

նութեան նախարարը:

-Մեծ զօրահանդէսները դեկավարում է կամ նախարարը կամ գլխաւոր շտաբի պետը: Քանի որ սա ինչ-որ միջանկեալ կամ պահի անհրաժեշտութիւնից թեթեւեւ միջոցառում է, կարող է դեկավարել Ապրիանովը, որը նոյնպէս լաւ ճանապարհ է անցել եւ մարտական գեներալ է:

-Զօրահանդէսի մասնակիցների կազմում պետք է ընդգրկուել 2 շարասիւն վազուէն Սարգսեանի անուան ռազմական ինստիտուտից, 2-ը՝ ՊՆ Ո զօրամասից, 1-ը՝ ԱԱԾ-ից, 1-ը՝ յատուկ նշանակութեան գնդից, 2-ը՝ ոստիկանութիւնից: Այսպիսի մասնակցութեամբ Ազատութեան հրապարակում հնարաւոր է ապահովել կազմակերպութեան զօրահանդէս:

-Նրանք պիտի վաղուանից սկսեն այդ պարապմունքները, որպէսզի հասցնեն:

-Արդեն սկսել են: Նախարարի հրամանով, զօրահանդէսի ամենօրեայ մարզումները սկսելու ժամկետ է նշանակուել մարտի 21-ը, իսկ մարտի 28-ին, ապրիլի 3-ին, 5-ին եւ 8-ին Ազատութեան հրապարակում: Այս տեսակետով մարզումները կարող են ապահովել ցանկալի արդիւնք:

-Այո, կը հասցնեն:

-Ինչպի՞ս էք գնահատում նախագահի պաշտօնը ստանձնելու այս ձեւը:

-Ստացուել է, որ քաղաքացիական նախագահը երդում է տալիս այն պայմաններում, կարծես թէ զինուորական խուճուկի երկիր լինի: Նրան ողջունելու են ոչ թէ քաղաքացիները, այլ այդ չորս ուժայինների առանձին ներկայացուցիչներ: Ծատ անյաջող մտայղացում է:

Զրուցեց ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ

ներքին գործերի մշտական յանձնաժողովի անդամ: -1999-ից մինչ օրս էական մասնակցութիւն է ունեցել ԱԺ շուրջ 62 նախագծերի ու օրէնքների քննարկման գործում: -Անվտանգութեան պահեստի գնդապետ է: -Ամուսնացած է, ունի երեք զաւակ:

Զեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863

ՎԱՅԱՍՏԱՆ

ՈՐՈՒ ԿԸ ԽԱԲԷՔ ՊԱՐՈՆԱՅՔ ՌՈՊԵՐԹ ԲՈՉԱՐԵԱՆ, ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԵՒ ՄԱՍԱՄԲ ՆՈՐԻՆ...

ՄԻՔՕՑԱԿՈՐԵԱՆ

Պարոնայք Ռոպերթ Քոչարեան եւ Սերժ Սարգսեան եւ մասամբ նորին... որո՞ւ կը խաբէք ձեր կեղծ հայրենասիրութեամբ. կը կարծէք թէ մարդիկ կո՞չր են ու չե՞ն տեսներ ձեր աճապարարութիւնները:

Հայրենասէրները՝ Անդրանիկներն ու Մուրադներն էին, որոնց առանց ակնկալութիւններու կամ անձնական շահերու, դաշտ իջան հայրենիքի փրկութեան համար եւ ոչ թէ ձեզ պէս հայրենիքի նախագահական բռնազրաւուած բարձր աթոռը նստած կը ջանանք ամէն կերպ կողոպտել, թալանել, ամէն ազատութեան ձայն խեղդելու ձեր անձնական շահերը հետապնդել եւ աջ ու ձախ խնամիրական պաշտօններ կը բաժնէք ձեր հարազատներուն ու համախոհներուն:

Պարոնայք Ռոպերթ Քոչարեան եւ Սերժ Սարգսեան, Հայաստանը ձեր հօրը կողմէ ձեզի ժառանգ մնացած չէ որ ձեր միակ սեփականութիւնը ըլլայ: Հայրենիքը ոչ մէկու անհատական ժառանգութիւնն է եւ չէ եղած երբեք: Հայրենիքը ընդհանրական է, բոլորիս կը պատկանի եւ բոլորս ալ հայեր ենք եւ նամանաւանդ մեզմէ շատերը, ձեզմէ հազար անգամ ալ աւելի մաքուր հայրենասէրներ ենք:

Յաւալին սակայն այն է որ կարգ մը մարդիկ եւ կուսակցութիւններ, իրենց նեղմիտ ու մուծ հաշիւներով, կը փորձեն ձեր խարխուղած ու նաւաբեկութեամբ լրատին ձեռք երկարել ու ձեզ ժամանակաւոր փրկել ստոյգ կործանումէ:

Կը կարծէ՞ք թէ ժողովուրդը չի տեսներ ձեր տասը տարուան ապօրինի շահարկումները. Ձէ՞ք լսեր անոնց ձայները որ կը գոռան՝ «Հեռացէ՛ք, Հեռացէ՛ք»:

Ինչո՞ւ չէք ուզեր ընդունիլ թէ ձախողած էք ձեր առաքելութեան մէջ եւ Հայաստանի վերջին աստիճան չքաւորութեան մատնուած ժողովուրդը ձեզմէ կ'ուզէ ձերբազատուիլ:

Իսկ դուք՝ «վերի խաւի» մարդիկդ, այսօր ձերջին քսան տարուան մէջ, յանկարծ մէջ-մէկ միլիոնատէրեր դարձած էք եւ «մենաշնորհ» դիրքերու ու բաժիններու տէր դարձած էք, եւ զերտութեան մէջ կը լողաք, իսկ անդին խեղճ ժողովուրդը իր ամէնօրեայ ապրուստը հոգալու ճարը նոյնիսկ չունի: Ամսական 100-300 տոլարով

ընտանիք չ'ապրիր:

Դուք ձեզ այսօր ազատութիւն կու տաք աջ ու ձախ «ընդդիմադիրներ» ու «դաւադիրներ» կոչել ազգասէր մարդոց ու ձերբակալել զանոնք, որոնք համարձակած են ցոյցեր կազմակերպել եւ իրենց դժգոհութիւնը արտայայտել ձեր երկիրը կառավարելու գործելակերպին նկատմամբ, մարդիկ որոնց միակ ցանկութիւնն է ապրիլ ազատ, անկախ եւ հպարտ իրենց հայրենիքի նուաճումներով. այսինքն մարդիկ՝ որոնք իսկական հայրենասէրներն են:

Ձեր միակ մտահոգութիւնը կողոպտել ու թալանել է հայրենիքը եւ ձեր հարստութիւնը դիզել է: Սակայն սփիւռքի թէ հայրենի ժողովուրդը կոչը չէ այլեւս ու լուռ պիտի չմնայ ու կը հետեւի ձեր քայլերուն: Ժամանակը կու գայ եւ դուք Սփիւռքի օժանդակութեան պէտքը պիտի ունենաք: Տեսնենք թէ ի՞նչ պիտի ըլլայ Սփիւռքահայութեան կեցուածքը ձեր հանդէպ, երբ այդ կարիքը զգացուի:

Ժամանակը եկած է որ պատմութեան էջերուն աչք մը նետէք ու լաւ մը սերտէք թէ ձեզմէ առաջ ուրիշ շատ բռնակալներ եկած ու անցած են ու ճնշած են իրենց իսկ սեփական ժողովուրդը, սակայն ժողովուրդներ կը դիմակալեն այդ բռնակալներու տառապանքները եւ ժամանակաւոր կը համբերեն ու կը համակերպին անոնց քմահաճոյքներուն, շատեր կը լքեն իրենց հայրենիքը ժամանակաւոր, շատեր ալ կը հեռանան ստիպողաբար առյաւէտ ձեր նման անպէտք դեկավարներու սխալներու պատճառաւ ու կ'երթան ապրելու աւելի բարեգաւաճ ու դեմոկրատ երկիրներու մէջ, բայց անպայման ուշ կամ կանուխ կու գայ օրը եւ բաժակը կը յորդի եւ կը ձերբազատուին ձեր նման տիրակալներու ձեռքերէն: Պատմութիւնը վկայ, ժողովուրդն է միշտ յաղթական:

Այսօր Հայաստանի նախագահութեան աթոռը «բռնազրաւուած» կը նկատենք, քանի որ Պարոն Քոչարեան, ապօրինի ընտրուած էք եւ ո ոք կրնայ ջնջել այդ հայոց պատմութեան էջերէն: Եւ այդ սխալին բեռան ծանրութիւնը կ'իջնայ Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ ողբացեալ Վազգէն Սարգսեանի ուսերուն վրայ, որոնք ազնուօրէն, հայրենիքի մաքուր սիրոյ հաւատքով, պատճառ եղան որ դուք բազմիք այդ աթոռին վրայ առանց իմանալու

ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԴԱՐՁ

Դէպի ո՞ւր կ'երթայ Հայաստան: Անցեալ թէ ապագայ: Թէ՞ ապագայի քայլերով դէպի՝ անցեալ...:

Հակաժողովրդավարական իշխանութիւնները կը շարունակեն իրենց կամայական, անպատասխանատու քայլերը, ձերբակալութիւններ, բռնութիւն, պաշտօնէ արձակում...:

Անցնող մէկ քանի օրերուն պատահած զարգացումները եկան համոզել, թէ բարեփոխումներու փոխարէն հայրենի իշխանութիւնները բռնութիւն կը կիրառեն, քինախնդրութեան մուրհակներ կը մաքրեն:

Յատուով իմացանք, Հայաստանի Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան ատենապետ ընկերուհի Լուսինա Սարգսեանի ձերբակալութիւնը, հոգ չէ թէ մէկ քանի ժամ ետք ան ազատ արձակուեցաւ: Ընկերուհին, ազատ խօսքի նորագոյն գոհն էր Հայաստանի իշխանութիւններուն գործադրած բռնութիւններուն: Կամայական եւ իրերայաջորդ ձերբակալութիւնները հաւասարակշռութիւն կորսնցնելու հետեւանք են: Ըստ երեւոյթին իշխանութիւնները կ'որդեգրեն 1940-ականներու Ստալինեան ժամանակը ջանին գործող տիրահաշակ, Քէյ. ձի. Պի.՝ին ոճը՝ լիք-տացնել երկիրն մէջ եւ երկրէն դուրս գործող դիւանագիտական օղակի մէջ ծառայող պարկեշտ անձնաւորութիւնները եւ ահա, ստալինեան մահակը հասաւ մինչեւ Լիբանան, այնպիսի անձնաւորութեան, որ միայն պատկառանք ու յարգանք կը սերմանէր Հայաստանի Հանրապետութեան, ուր որ ալ գտնուած ըլլար, ինչպիսի ծառայութիւնն ալ ստանձնէր: Եւ ըստ երեւոյթին նման կամայականութեան գոհ՝ Լիբանանի մօտ Հայաստանի դեսպանին՝ դոկտ. Վահան Տէր Ղեւոնդեանին կողքին կրնայ դառնալ իւրաքանչիւր անձ: Եւ նման բռնութիւններու ծաւալը մտահոգիչ կերպով կ'ընդարձակուի օրէ օր...:

Դժբախտաբար Հայաստանի ժողովրդավարական դիմագիծը վիրաւոր է արտաքին աշխարհի համար նախագահական ընտրութեան եւ յետ ընտրութեան ընթացքին ի գործ դրուած բռնարարքներով, ժողովրդավարական ոգիին հակառակ գործելակերպով: Եւ այս բոլորը եւ արուեստական «պետութեան անվտանգութեան» չհիմնաւորուած պատրուակով...:

Լիբանանահայութիւնը, - անկասկած իր բոլոր շրջանակներով, - ընդվզումով տեղեկացաւ դեսպան դոկտ. Վահան Տէր Ղեւոնդեանին անժամանակ տուն կանչուիլը...:

Ամօ՛թ Հայաստանի իշխանութիւններուն...:

«ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹ Լիբանան

ձեր երկուքին իսկական ներքին բռնակալ ու չար էութիւնը:

Եթէ տակաւին կան մարդիկ որոնք կը կասկածին 1999 Հոկտեմբեր 27ի ոճրագործներու ինքնութեան նկատմամբ՝ թող Մարտ 1ի գիշերուայ դէպքերը ապացոյց ըլլան հետեւեցնելու իրենց անհատական եզրակացութիւնները այդ ոճրագործներու իսկական ինքնութեան մասին:

Այցելեցէք Ֆրանսա կամ ընդհանուր Եւրոպա եւ տեսէք թէ ինչպէս ամէն առիթով ժողովուրդը ցոյցի կ'ելլէ իր դժգոհութիւնը արտայայտելու համար եւ կը փորձէ կառավարութիւնը տապալել թէ դժգոհ է այդ կառավարութեան գործելակերպին եւ այդ իրաւունքը չի գիշիր ոչ մէկ բռնակալի կամքին, քանի արիւն թափած է այդ իրաւունքին տիրանալու համար:

Դեմոկրատական դրութեան ամենակարեւոր չափանիշներէն մէկն է ժողովուրդի ազատ խօսքի ու կամքի արտայայտութեան ձայնը: Եթէ բռնակալ չէք, ինչո՞ւ կը խլէք հայ ժողովուրդին այդ իրաւունքը:

Այն անձերը որոնք իրենց հարազատ ժողովուրդի անմեղ ցուցարարներու վրայ կրակելու հրահանգ կու տան, որոնք պարզապէս համարձակած են բողոքելու իրենց ապրելակերպի ու ապրուստի վատ

վիճակին համար, ամենայն հեշտութեամբ օր մը այդ նոյն անձերը կարող են նաեւ առանց վարանելու ուրիշ ոճրագործութիւններ ալ գործադրել ու ձեռքերնին արիւնտով լուալ, քանի որ անոնց հոգիներուն մէջ դրամասիրութիւնն ու թալանն է որ կ'իշխէ եւ ոչ թէ հայրենասիրութիւնը եւ կամ հայրենիքի կամ ժողովուրդի բարգաւաճումը:

Արեւմուտքի մէջ մենք ներկայ եղած ենք շատ մը ցոյցերու, բայց ոչ մէկ ցուցարար իր իսկ սեփական բանակի փամփուշտներէն մահացած է:

Սփիւռքի մէջ մարդիկ կան, սերունդներ յաճախ, առանց իսկ դոյզն նիւթական ակնկալութեան, կամաւոր ծառայած են այս կամ այն կուսակցութեան կամ կազմակերպութեան մէջ, ի շահ հայ ազգի գոյատեւման եւ հայ մշակութի յարատեւութեան: Այս է օրինակելի հայրենասիրութիւնը:

Տասը տարիէ ձեր անձնական «խանութի» պէս իշխեցիք եւ կեղեքեցիք հայրենիքը, ա՛լ կը բաւէ. ժամանակն է որ երկրի ղեկը աւելի խոնարհ ուրիշ հայրենասէր անձերու յանձնէք:

Լսեցէ՛ք ձայնը ժողովուրդին որ կը գոռայ՝ «Հեռացէ՛ք, Հեռացէ՛ք»:

Food, Drinks, Fiesta! Gaidz presents... Fiesta Night! April 5, 2008 7:30 PM @ 1060 Allen Ave. Pasadena, CA 91104 Join us for a "Noche Muy Fantastica!" Donation \$30

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՂԻ ՎԱՍԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ԸՆՈԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

ԱԶԳԱՅԻՆ

ՄԻՆՉ ԻՐԱՔ ԿՐԱԿՆԵՐՈՒ ՄԵՋ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂՐԵԱՆ

Ամբողջացնելով այս յօդուածի վերնագրի նախադասութիւնը, պիտի գրէինք հետեւեալը. «Մինչ իրաք կրակներու մէջ կը տուայտի, նախագահ Պուշ կը խօսի յաջողութիւններու մասին»:

Ողբերգա-կատակերգական (tragi-comic) բովանդակութիւն մը կայ վերոյիշեալ երեւոյթին մէջ, որ քիչ մը կը նմանի, եւ կը յիշեցնէ հռոմէացի բռնատէր Ներոնի պատմութիւնը: Մինչ Հռոմ կրակներու մէջ կ'այրէր, Ներոն, իր պալատին

ի վեր - սիւննի, շիի եւ քիւրտ կրօնական եւ ազգայնական, նոյնիսկ նահանգային մարզերէն ներս: Բռնատէր Սատտամի օրով, իշխող դասը սիւննի էր, եւ շիի եւ քիւրտ համայնքերը ենթարկուած էին իր իշխանութեան, աննկարագրելի պայծառներու տակ, հազիւ գոյութիւն մը քաշքշելու կարելիութեամբ: Պուշ հայր նախագահը, Մոցի իր պատերազմի միջոցաւ չկրցաւ անհրաժեշտ հարուածը տալ Սատտամ Հիւսէյնի բռնատիրութեան: Հազիւ տասնեակ մը տարիներ ետք, իր գաւազը, ներկայ



պատշգամէն, հիւանդագին այլանեւուած հոգեվիճակով մը «սատիատական», հոգեկան հաճոյք կը ստանար իր դիտած երեւոյթէն:

Իրաքեան պատերազմը արդէն ամբողջացուց իր ճիշդ տարին, եւ մտաւ ճրգի մէջ, առանց այդ պատերազմի աւարտի նշոյցն իսկ ուրուագծելու: Շուրջ տարիէ մը ի վեր, նախագահ Պուշի ջատագոված եւ կիրարկած գինուորական «յաւելումը» (surge), իր վերիվայրումներով, ինգնագոյութեան եւ լաւատեսութեան քօղի մը տակ կը թմբկահարուի պաշտօնական Սպիտակ Տան, եւ յատկապէս Պուշի քաղաքականութեան համաձայնողներուն ու ետին կազմողներուն կողմէ: Անդին, այն երկիրը որ դեմոկրատիայի նմոյշ մը պիտի դառնար ամբողջ Մերձավոր Արեւելքի համար, կը գալարուի ներքին հակասութեանց մէջ, եւ այս, ոչ միայն քաղաքական, այլ ապահովութեան եւ քաղաքացիական կռիւներու մէջ: Ենթահողբ բաւականին յստակ է արդէն տագնապի սկիզբէն

Պուշը, սխալ հաշիւներու վրայ հիմնուած ձեռնարկեց ներկայ պատերազմին: Այսօր կացութիւնը բոլորովին տարբեր է պատերազմի սկիզբէն սաղին: Արագաբար Սատտամի հրապարակէն անհետանալէ ետք, իրար յաջորդող իրաքեան կառավարութիւնները մէկ կողմէ, իսկ ամերիկեան 180,000 հաշուող բանակը միւս կողմէ, անկարող եղան ներսէն կացութեան վրայ հակակշիռ բանեցնելու եւ շարունակուող պատերազմական վիճակին գոհացուցիչ աւարտ մը գտնելու:

«Մատենադարանում ցուցադրուած ըմպելիքներն ու իւղերը մեր ձեռագրերի անյատակ ծովից վերցրած ընդամէնը մի քանի կաթիլն են», ասում է Արմէնը: Ձեռագրերի աշխարհ ինքը մոտք է գործել 1985 թուականից եւ առաջին իսկ ընթերցումից, ինչպէս ինքն է ասում, «ձեռագրերն իրեն յուշել են դարերի ճշմարտութիւնը: Մի կեանքը քիչ է այդ ձեռագրերը կարդալու համար: Իւրաքանչիւր հիւանդութեան համար գրուած դեղատոմսերով մի ամբողջ ինստիտուտ կարող է աշխատել»: Բժշկագիտական կրթութիւնից բացի ունի նաեւ հոգեւոր աստիճան՝ սարկաւազ է, ինչն աւելի է զօրացնում միտքը, ուժ տալիս եւ օգնում ծածկագրերը վերծանելուն, բարդ հիւանդութիւնների դեղատոմսեր գտնելուն: Նոյնիսկ քաղցկեղի բուժման դեղատոմսեր կան ձեռագրերում, այդ հիւանդութիւնը յիշատակում է խաչեփառ անուամբ: Քչերին է տրուած բժշկագիտական ձեռագ-

րեր կարդալու եւ վերծանելու ունակութիւնը, դա առանձնաշատուկ ձիրք է, որը ժառանգաբար փոխանցուած է սերնդէ-սերունդ: Դրանք կարդալու համար պէտք է իմանալ ծածկագիրը, որն օգտագործուել է դեղատոմսերը պատահական աչքից հեռու պահելու համար: Անգիտութեան պատճառով դրանք կարող են մահացութեան պատճառ դառնալ, քանի որ դեղատոմսերում նշուած են այնպիսի թունաւոր բոյսեր, ինչպէս, օրինակ, լոշտակը:

Արմէն Սահակեանն այժմ հրատարակութեան է պատրաստում միջնադարեան դեղատոմսերի նոր ընտրանին, որում տեղ են գտել նաեւ անհամեմատ պարզ դեղատոմսեր:

Եթէ մօտակազ ամիսներին Հնդկաստանից իրեն ուղարկեն լոթուր կոչուող բոյսի կեղեւը, ուրեմն որդան կարմրի գունապնակին՝ նարնջագոյնից մինչեւ մանիշակագոյն, կ'աւելանայ ալ կարմիրը, որի ստացումն առանց այդ բոյսի հնարաւոր է: «Վստահ եմ, որ այն ստանալուն պէս որդան

կարմիրն անպայման կը ստացուի, որովհետեւ Հայաստանում աճող տորոն բոյսի արմատներով արդէն իսկ ունենք որդան կարմրին շատ մօտ գոյն», ասում է նա:

Մատենադարանի տնօրէն Հրաչեայ Թամրազեանը կարծում է, որ Մատենադարանում ցուցադրուող դեղամիջոցներն ու ներկանիւթերը գիտական կարեւոր նշանակութիւն ունեն, որովհետեւ մաքուր ու կենարար ակունքներից են գալիս: «Գիտականից արտադրականին անցնելու ծրագրեր ունե՞ք», մեր հարցին նա պատասխանեց. «Այս բաժինը ընդլայնուելու լայն հնարաւորութիւններ ու հեռանկարներ ունի: Կարելի է ասել, սա հեռանկարային ճիւղ է Մատենադարանի համար եւ առաջիկայում գիտական մի ամբողջ խումբ կ'աշխատի այնտեղ: Սա, ի հարկէ, չի նշանակում, որ արտադրուած յուշանուէրները մասսայական վաճառքի պիտի հանուեն: Որպէս իւրատիպ եւ արժէքաւոր յուշանուէրներ, դրանք կը լինեն միայն Մատենադարանի յուշանուէրների խանութում», ասաց Թամրազեանը:



Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance
by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans
by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation
by Employers Compensation Insurance Company

Call now and let me help take the worry out of your health care!

HARUT DER-TAVITIAN

Authorized Independent Agent
 1807 W GLENOAKS BLVD. #202
 GLENDALE, CA 91201
 (818) 502-3233
 HARUT@EXCELHYE.COM
 WWW.EXCELHYE.COM
 CA Insurance
 License #0B28270



Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

ՀԱԿՆ-ՎԱՅՆ ՎԱՅԱՆԻՆ ՈՐՊԷՍ ՎԵՐԱՑԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆՑ

84-ամեայ վարպետը ծնունդ է Կ. Պոլսում (Ստամբուլ), 1923 թվականին: Երեք տարի անց ընտանիքով տեղափոխուել է Ֆրանսա, հաստատուել Փարիզում, ուր յաճախել է ընդարձակ մի մանկապարտեզ եւ հենց այնտեղ էլ սովորել է նկարել: Սկիզբից մինչեւ այսօր նա փոքր ընդմիջումներով նկարում է եւ սովորում: 1929 թվականին նրա ընտանիքը տեղափոխուել է Հայաստան, որտեղ նա կրթությունը զուգահեռ շարունակում է նկարել: Աւարտելով դպրոցն ու նկարչական դասընթացները՝ 1939 թվականին ընդունում է նկարչական տեխնիկում, իսկ յետոյ նաեւ բուհ:

1941 թվականին զորակոչվում է բանակ, ծառայութեան հետ աշխատում իբրեւ զորանոցի նկարիչ: Ծուռով սկսում է պատերազմը: Հակն վահանին մասնակցում է մեծ Հայրենականին, վիրավորում է եւ վերադառնում Երեւան, աւարտում ուսումը, անցնում աշխատանքի: 1953 թվականին բարձրագոյն կրթութեամբ մեկնում է Լենինգրադ (Սանկտ Պետերբուրգ), յաճախում նկարչական ակադեմիայի դասընթացներին: 1955 թվականին վերադառնում է Երեւան, ծառայում աշխատանքային լայն գործունէութիւն, կատարում մասնագիտական լուրջ ներդրումներ, աչքի ընկնում ջանասիրութեամբ: Նկարչութեան յամառ սէրը նրան ուղեկցում է ամենուրեք:

Հաստատուելով ԱՄՆ-ում՝ Հակն-Վահն վահանին խորանում է վերացական նկարչութեան մէջ, հիմնականում իր ֆանտազիա-ֆուտուրիզմ ձեւի ոլորտում, ապա եւ ստեղծում զուտ վերացական մանրանկարչութեան ինքնատիպ աշխատանքներ, հիմնում սեփական դպրոց, դառնում վերացական մանրանկարչութեան հիմնադիրը: Ծուրջ 600 մանրանկարները վկայում են նրա երիտասարդական անսպառ աւելի մասին, որով նա շարունակում է արարել գիշեր ու հզօրացնել իր իսկ անձնական պատկերասրահը:

Գեղանկարչի եզակի գործերը կատարուած են ոչ մեծ, քան 5/8 ինչ

չափսի, սովորական, հաստ ու բարակ թղթերի վրայ: Հաւասարապէս օգտագործուած են իւզաներկ, ջրաներկ, աքրիլ: Վրձինն ու մատիտը վարպետի անբաժան զէնքերն են: Վառ երեւակայութիւնը բերում է նոյնքան վառ լուծումներ, երանգների կենդանի խաչաբաղեւորութիւն, տրոհուած ծիածանի երկներանգութիւն, չնայած դասականի սեւն ու սպիտակը չեն նահանջում, պատուաւոր տեղ ունեն նրա կարմիրի, կանաչի, դեղինի, կապույտի կողքին: Վաստակաշատ արուեստագէտի նկարչական ժառանգութիւնը հարուստ է նաեւ վերացական իւզաներկ կտաւներով որոնք նոյնպէս կարօտ են հրատարակման: Պէտք է որ բարեգործները, հովանաւորները հոգ տանեն, պաշտպանեն ու պահպանեն այդ անկրկնելի արուեստը, քաջալերեն գեղանկարչին նիւթապէս՝ ազգանուէր գործի համար:

Ծուրջ 6 գիրք-ալպոմով կ'ամբողջանայ Հակն-Վահն վահանիի կողմից հիմնադրուած վերացական մանրանկարչութեան եզակի եւ զարմանահրաշ աշխարհը: Բարի կամքի մարդկանց ուշադրութիւնն ենք հրաւիրում՝ այս բացառիկ, հազուադիւս հաւաքածուն շուտափոյթ համարմարդկային սեփականութիւն հարձնելու վրայ: Վարպետն առայժմ բաւարարում է տեղական բնոյթի՝ Լոս Անձելեսի ան ինստիտուտի մշտական ցուցահանդէս-ցուցադրումներով, թէեւ քանիցս ցուցադրուել է հեռուստատեսութեան տարբեր ալիքներով: Այս ամէնը որպէս իսթան ընդունելով՝ նա անդու ջանասիրութեամբ շարունակում է խորանալ իր հիմնադրած վերացական մանրանկարչութեան գաղտնիքների մէջ՝ առաւել նորովի արարելով եւ զարգացնելով միայն իրենը, սեփականը, ինքատիպը:

Բազմակողմանի զարգացած արուեստագէտը Ամերիկեան չափանիշներով դոկտոր-պրոֆեսոր է, ունի հայրենիքում ստացած գիտութեանց թեկնածուի գիտական աստիճան եւ դոցենտի կոչում, եղել է աւագ գիտաշխատող, հասարակական գործիչ:

ԵՍ ՏԵՍԵԼ ԵՄ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ (ԱԴՐԻՆԷ ԳԱՌՈՒՇԵԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ)

ԱՐՏԱԿ ԲԱՐԵՂԱՄԵԱՆ

5-6 տարեկան էի, բնակւում էինք Բուլղարիայի Պլովդիւ քաղաքում: Հայրս փոքրիկ սրճարան ունէր: Մեր տան դիմաց՝ փողոցի միւս կողմում կար բուլղարացու սրճարան: Մի օր լուր տարածուեց, թէ Անդրանիկը դիմացի սրճարանում է, եկել է ընկերներով (յետոյ պարզուեց՝ ֆիտայիներ է հաւաքագրում): Հայրս էլ էր մասնակցում նրա՝ յաջորդ օրերին նոյն սրճարանում կազմակերպուած հաւաքոյթներին: Մի քանի օր անց հայրս մօրս ասում է, թէ գնում է կայարան՝ սուրճ գնելու: Նոյն օրը կէսօրին մեր տուն է գալիս հօրեղբայրս եւ ասում, որ հայրս՝ Կարապետը ֆիտայի է գրուել եւ այժմ Անդրանիկի հետ գտնուում է Սոֆիայում: Հենց նոյն օրը մայրս Սոֆիա հասաւ: Չմեռ էր, ցուրտ: Մութ էր արդէն երբ ծեծեցինք Սոֆիայի հայկական եկեղեցու դուռը: Ժամկոչը մեզ ներս առաւ: Լսելով մօրս պատմութիւնը, նա խոստացաւ առաւօտեան ուղեկցել Անդրանիկի մօտ: Գիշերեցինք եկե-

ղեցում: Առաւօտեան ժամկոչի հետ քայլեցինք քաղաքի փողոցներով, ապա մտանք հետ ընկած մի փոքրիկ հրապարակ, որի խորքում սրճարան կար: Հենց սրճարանի շէքից ժամկոչը մօրս ցոյց տուեց սեղաններից մէկի մօտ նստած փարթամ պեխերով մէկին: Մայրս ծնկի եկաւ ու իմ ձեռքը բռնած ծնկաչոք առաջացաւ դէպի նա: Վերջինս նկատեց մեզ եւ արագ ընդառաջ գալով, բարձրացրեց մօրս, ասելով, որ ինքը սուրբ է: Մայրս վեր կացաւ, ապա լացակումած խնդրեց նրան վերադարձնել հօրս: Իմանալով հօրս անունը, Անդրանիկը մարդ ուղարկեց նրան բերելու: Քիչ անց, այդ մէկի ուղեկցութեամբ, եկաւ հայրս եւ (այս ամէնից ոչինչ չհասկանալով) գրկեց ինձ ու լուռ մէկ մօրս էր նայում, մէկ՝ Անդրանիկին: Անդրանիկը սկսեց հօրս համոզել, որ հետ դառնայ, բայց նա ընդդիմանում էր: Յիշում եմ Անդրանիկի վերջին խօսքերը.

- Վերադարձիր Կարապետ, ինձ հետ եկողը հետեւից լացող չպիտի ունենայ...

ՄՍԱՑՈՒԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԷԶԵՐՈՒՄ 1957-2005 ԱՍԵՓԱՆ ԱԼԱԶԱՅԵԱՆ

Շնորհակալութեամբ ստացանք տղանդաշատ գրող, հրապարակագիր եւ մշակութային գործիչ Ստեփան Ալաջաջեանի «Հայ Մամուլի էջերում», նոր հրատարակութիւնը, որ լոյս ընծայուած է 2008-ին, Քալիֆորնիա (ԱՄՆ), խմբագրութեամբ՝ Սարգիս Մաճառեանի:

Ստեփան Ալաջաջեան հեղինակ է 27 ստեղծագործական գիրքերու, որոնցմէ հինգը թարգմանուած է ռուսերէնի (Հարթ Տանիքներ, Եղէքները Ձիտնարհուեցին, Անառագաստ Նաւակներ, Ապառաժները Արտասուել Գիտեն, Մատչեն Ապրում է Փարիզում), եւ մէկը՝ պարսկերէնի (Եղէքները Ձիտնարհուեցին): Ունի շարք մը վիպակներ, որոնք թարգմանուած են բազմաթիւ լեզուներու:

«Հայ Մամուլի էջերում» Գիրքը, որ կը բաղկանայ 376 էջերէ, կը պարունակէ օրաթերթերու եւ որոշ գրական ամսագրերու մէջ 1958-2005 թ. հրատարակուած, նաեւ անտիպ (Ազգասիրութեան եւ Հայրենասիրութեան Մասին-էջ՝ 92), մինչեւ օրս իրենց այժմէականութիւնը պահող յօդուածներէ: Անոնց մէջ արտայայտութիւն կը գտնեն մեր գրականութեան ներս մուտք գործող նոր գրիչներ (Մեր Նոր Արձակագիրները- էջ 5), որոնք յետագային պիտի դառնային մեր առաջատար, այլապէս մեր վաւերական գրողները, ինչպէս պիտի հաստատէր Ալաջաջեան: Խորհրդային ժամանակաշրջաններուն շրջագիծին մէջ ինկող հայրենական պատերազմի ռազմա-գեղարուեստական գրականութիւնը, ուր Ալաջաջեան իր գրականագիտական գնահատութիւններուն զուգահեռ, նաեւ իր քննարկման առարկան



պիտի դարձնէր գերմանական արշաւանքներուն կապակցութեամբ Ստալինի արձանագրած շատ մը ռազմագիտական սխալ վրիպումներն եւ տնօրինումները: Գրական քննական վերլուծումներ (Սպասում ենք-էջ 59): Թարգմանական հրատարակութեան Հիմնախնդիրներու ուսումնասիրութիւն (Գեղարուեստական Գրականութեան Թարգմանութեան Արդի Վիճակը եւ Մեր Խնդիրները-էջ 95): Դիմանկարներ՝ (Ստեփան Զօրեան - էջ 109, Կոստան Զարեան -էջ՝ 128, Զարեան- էջ 274), հարցազրոյցներ, եւ այլ հետաքրքրաշարժ ազգային, ազատագրական (Ձէյթունի Ապստամբութիւնը) եւ հայոց դէմ կիրարկուած Յեղասպանութեան կապակցութեամբ մշակուած յօդուածներ (էջ՝ 205), եւ այլազան շահեկան գլուխներ, որոնք կը վկայեն հեղինակին խմբակցական կարողութիւնը, առարկայականութիւնն ու անմիջականութիւնը:

Շնորհակալ աշխատանք մը՝ գնահատանքի արժանի:

MELODY INTERNATIONAL MUSIC SCHOOL Inc.

ՄԵԼՈՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Join Our New Music School in Pasadena
By Experienced & Educated Teachers

Piano, Keyboard, Violin, Viola, Vocals, Singing, Guitar, Bass, Flute, Duduk, Drums & Percussion lessons for all ages and levels

Professional Digital Recording studio for all your audio recording needs

1060 N. Allen Ave. #D Pasadena, CA 91104
Phones: (626) 797-8867 & (818) 599-1606

and
334 N. Central Avenue Unit 202
Glendale, CA 91203
Phones: (818) 244-8244 & (818) 599-1606

Visit us at: www.musiclessons4u.com

ՅՈՒՇԵՐ

ՓՐԿԱՐԱՐ ԸԱՅՐ

Ռ. ԿՈՐԻԻՆ

(Շարունակում «Մասիս»-ի նախորդ թիվում)

Արտեմը թաղամասի փողոցները մեկը միևսին յաջորդելով գնում էր առաջ, չգիտէր ուր է գնում, ցրտաշունչ գիշերային օդը մեղմացրել էր նրա խիստ չուզումն ու հոգեկան տագնապը, բայց էլի մըսում էր, ձեռքերը մարմնին սեղմած, վիզը բաձկոնի օձիքով ծածկած աննպատակ քայլեր էր վերցնում անհամաչափ, կարծես ոտքերը իրեն չէին ենթարկում, մերթ կանգնում էր բոպչներ հայեացքը մի կէտի սեւեռած պահելով, ապա յանկարծ քայլերն արագացնում էր, կարծես միտքը այլ տեղ էր բանում, ով գիտէ տարուել էր իր անցեալի չուշերով, աչքի առաջն էր գալիս իր սիրահարութեան օրերը, թէ ինչպէս ձմեռային մի արեւոտ օր ընկերներին մէկի տուն Ռիմայի հետ ծանօթացաւ: Նրա եղնիկանման սեւ լիկ աչքերը, սաթաթոյր մագերը եւ բարեկազմ իրանը հէնց առաջին նայուածքից հոգու խորքում տեղ գտան: Ծանօթութիւնը վերածուել էր սերտ կապերի: Ժամադրուում էր նրա հետ, բայց աւաղ կարծ էին լինում հանդիպումները: Ռիման վախենում էր տնից, թէ յանկարծ չնկատեն իրեն, որ ինք մի տղայի հետ տեսակցում է, ման է գալիս ու այդ պատճառով ուշանայ եւ կասկածանքի առիթ տալ:

Այստեղ Ամերիկայում երեխան որ հասնում է 18-ի իրեն իշխան է երեւակայում, ինչ սիրտն ուզում է, կատարում է առանց հարցնելու իր մեծերին, երբ ուզում է տնից բացակայում է, ում սիրում է, նրա հետ յարաբերում է, առանց քննելու, թէ դա ով է եւ ինչարար է, գիշերն էլ ինչ ժամի ցանկանում է, տուն է գալիս, վայ որ հայրն ասաց ինչո՞ւ ես ուշ գալիս, մայր ու որդի խռովում են եւ տան էրիկին աչքից պոկում՝ համարելով մի աւելորդ տարր: Այս տեսակ հասարակարգը պատճառ է դառնում, որ շատ ընտանիքներ քայքայուեն եւ երիտասարդներ շեղուեն: Հասարակական կեանքը հիմնուած է մարդ անհատի ազատութեան վրայ, ինչ տեսակ հագուստ ցանկանան հագնել, ինչ որ կամեցան, անեն, միայն թէ ուրիշի ազատութիւնը չխանգարեն կամ չվտանգեն: Սակայն շատ-շատեր էլ կարեւորութիւն տալով բարոյական արժէքներին կեանք են ապրում, յարգում են իրենց մեծերին եւ առանց նրանց խորհուրդին դիմելու քայլ չեն վերցնում, այսպիսով դառնում են արժէքաւոր եւ յարգելի անձեր: Մեր նորեկ հայերիս համար Ամերիկեան հասարակարգը խորթ եւ անհարգատ է: Մենք հայերս ապրել ենք համախաբւած, մէկը միևսին վիճակից տեղեակ եւ իրարու նկատմամբ հոգատար, ընտանիքի դերը մեր կեանքում շատ մեծ է եղել ազգութիւնը պահելու համար, եթէ հաւատարիմ չապրենք մեր սովորութիւններին, կորած ենք որպէս հայ եւ յայտնի չէ ինչ ենք դառնալու, կը ներէք իմ արտայայտութեանս համար, իր ազգութիւնից շեղողը դառնում է ջայլամ:

Ռիման բարեկեցիկ ընտանիքի գաւակ էր, դեռ աշխատանքի չէր անցել, տանն էր մնում եւ օգնում էր մօրը, օրուայ ժամերը համրած էին, այնպէս որ երկար չէր

կարող բացակայել: Արտեմը համոզուել էր, որ գտել է իր սիրած եարին, Ռիմայի այրող սէրը բոցավառել էր իր ողջ հուրիւնը: Գիշերները նրան էր երազ տեսնում, գիրկն առած սիրազեղ համբուրում էր, աշխատանքի ժամանակ նրան էր յիշում եւ կարօտում, նա ողջ ժամանակ իր աչքից չէր հեռանում նազելի նայուածքով ու հայեացքով: Արտեմը ամենայն ջերմեռանդութեամբ կարողացել էր գրաւել Ռիմային եւ երկուստեք խոստովանել էին իրենց սրտի գաղտնիքը:

-Ռիմա ջան, այլեւս չեմ համբերում, ամբողջ սրտով սիրում եմ քեզ, դու կեանքիս առաջին եւ վերջին սէրն ու ընկերս պիտի դառնաս:

-Արտեմ ջան, ես էլ եմ սիրում քեզ, դու իմ ուզած ու հաւանած տղան ես:

Արտեմը յիշում էր, թէ ինչպէս առաջին անգամ Ռիմային իրենց տուն էր բերել եւ ներկայացրել հօրն ու մօրը: Նրանք հաւանել էին աղջկան, հայրն թաքուն ուրախութեամբ ասել էր.

-Որդի՛ս, բոյ ու բուսաթով սիրուն աղջիկ ա, քեզ սազուող, բայց կարեւորը խելքն ու շնորհքն ա, մարդս չպիտի տարուի որեւէ բանի երեսային գեղեցկութեամբ, նայած նրա գլխում ի՞նչ կայ, ի՞նչ ընտանիքում է մեծացել եւ դաստիարակուել:

Մայրն ասել էր.

-Բալէ՛ս, սիրուն աղջիկ ա, դու բարով կեանք վայելես, բայց վերջնական որոշումը քոնն է, ես ու հէրդ խօսք չունենք, կարեւորը դու ես, որ մէկ կեանք հետը պիտի ապրես, լաւ ու վատ օրերի դարման ըլլինք: Իմանում ես, որ մեր եկեղեցու դրուած օրէնքով, երբ երկու հոգի ամուսնանում են, մինչեւ իրենց կեանքի վերջը իրար տէր ու պաշտպան պիտի ըլլեն, միայն մահը պիտի ջոկի իրենց, ինչպէս ես ու հէրդ, միշտ իրար հետ ենք եղել, ինչ դարդերի ու ցաւերի ենք դիմացել, բայց իրար համոզ հասել ենք էս ծերութեան տարիքին:

Այսպէս պատկերներն արօտացած յաջորդականութեամբ մտքից տողանցում էր Ռիման եւ նրան կապուող անց ու դարձը: Այդ մտորումների մէջ մխրճուած հեղափարծ աչքերը պլշուեց մի փոսի դիմաց, որի պոնկին էր կանգնած, եթէ չսթափուէր, պիտի գոյգ ոտքերով ընկնէր նրա մէջ, ով գիտէ ինչ ցաւալի դէպք պատահէր, հագիւ կարողացաւ կանգնեցնել իրեն, մէկ ցած նայեց, ի՞նչ տեսնի, մի քանդուած խորութիւն, անծածկ ու անհոգ թողնուած, հեռախօսալարերի տեղադրման գուր, օ՛հ, քաշեց ասելով.

-Եթէ ընկնէի մէջն, այս մենակութեան մէջ, հեռու տնից, մի տեղս կտորէր .ի՞նչ պիտի լինէր վիճակս: Գո՛հ էր Աստուծոց, որ փորձանքից ազատուել է:

Նորից ուժերը լարեց եւ ճամբայ ընկաւ: Այլեւս չէր մըսում, սիրային կեանքի ապրիշամէ գզացումները գինու պէս իրեն արբեցրել էին:

Նրան որեւէ բան չէր հետաքրքրում, կառչած յուշոյ մատենանին, կծիկը քակուել սկսեց: Ռիմայի ծնողները եկան աչքի առջեւ, որոնք հակառակում էին Ռիմայի հետ, որ չքաւոր ընտանիքի գաւակի հետ էր կապուել, բայց Ռիմայի անդրդուելի կեցուածքը նրանց մեղ-

մացրեց, համաձայնութիւն տուին: Արտեմը դրական լուր ստանալով շտապել էր Ռիմայի մօտ, նրան թեւերի մէջ առնելով ասել էր.

-Շնորհակալ եմ Ռիմա ջան, որ մեր սիրոյ համար պայքարեցիր եւ ծնողներիդ համոզեցիր մեր սիրոյ մասին, որն անկեղծ է ու անապակ:

Արտեմը ի նշան փոխադարձ ջինջ սիրոյ արտայայտութեան այնքան համբուրել էր Ռիմային, որի շրթունքներն ու այտերը ոչխարի թոքի նման կարմրել էին:

Ինչ խանդավառութեամբ պատրաստուում էին խնամախօսութեան գնալ, հայրն էր ու մայրը, մեծ հօրեղբայրը, մեծ հօրաքոյրն ու մօրաքոյրը: Ռիմայի ճաշակով ոսկէ վզնոց էր պատրաստել, որպէսզի այդ գիշեր ծնողները խօսք առնելուց յետոյ նուիրեն Ռիմային: Բոլորն էլ իրենց դոնադութեան հագուստներն էին հագել, կարծեմ եղանակը աշուն էր, օդը հաճելի էր: Ի՞նչ Ծաղկակողով էր պատուէր տւել՝ մեղունների ճաշակի պէս գեղեցիկ ու փարթամ: Ոնց էր Ռիման ուրախացել, կարծես աշխարհը իրեն տային, սիրոյ ծաղիկն առաւ Արտեմի ձեռքից, անուշ աչքերը յառած Արտեմին.

-Շնորհակալ եմ, ի՞նչ սքանչելի ծաղիկներ ես պատրաստել տուել:

Նա ուզեց պագնել Արտեմին, սակայն ամաչեց մեծերից:

Այո՛, ամօթ էին համարում նշանուածների կամ ամուսնացածների համբոյրը մեծերի ներկայութեամբ: Ճիշտ է դարը փոխուել է, կեանքը զարգացել է, բայց անշնորհք վարքերը ինչ կապ ունեն կեանքի զարգացման հետ, բարոյական արժէքները մնում են նոյնը անփոփոխ կեանքին արժէք եւ իմաստ տալու համար: Փողոցում կիսամերկ ման գալ, քամուել եւ սեքս անել, սա կենդանական վարք է, նա է այդպէս անում մարդկանց ներկայութեամբ փողոցում, որ գուրկ է բանականութիւնից:

Խնամախօսութեան եւ համաձայնութեան թուականից երեք ամիս չանցած երկու կողմերի ծնողները խորհուրդ տուին, որ նշանդրէքի եւ հարսանիքի հանդէսները շատ չուշանան, իմաստ չունի երկար մնալ, ոչ ոք ապագան չի գուշակել, ինչքան շուտ պսակուեն եւ ընտանիք կազմեն, լաւ կը լինի երկուսի համար, երեխայ կ'ունենան եւ նախքան ծերանալները մեծ-մեծ զաւակները իրենց օգտակար կը լինեն:

Անգիտակ ժամից ու գտնուած տեղից մերթ արագ, մերթ դանդաղ քայլում էր Արտեմը, երբեմն էլ տեղում կանգնած յուշոյ կծիկն էր ետ տալիս, թէ ինչպէս իր եւ Ռիմայի միասնական որոշումներով ու ծրագրերով տեղի ունեցան նշանդրէքի եւ հարսանեաց ձոխ

հանդէսները մեծաթիւ հարագատների եւ ընկերների ներկայութեամբ, հարսանիքի խաչքաւորը իր մանկութեան կնքահայրի տղան՝ Սեւակն էր: Բոց խայտանքի պարերով մինչեւ կէս գիշերն անց ուրախացան եւ ուրախացրին հարսանիքաւորներին: Մի շատ ճարտար խօսող թամաղա էր որոշուել, որը ըստ մեր հայկական սովորութեան բոլորին յարգեց ու կենացներ խմեց, նա հարս-թագուորի կենացը ծաղկեցնելով ասել էր.

-Սիրելի նորապսակ գոյգե՛ր, ես հրաւիրեալս ներկայ էի գտնուել ձեր պսակադրութեան հոգեգմայլ արարողութեան եկեղեցում: Բոլոր ներկաների հետ միասին ահանատեսն եղանք, թէ ինչպէս խաչքաւորի ձեռքի խաչի զօրութեան շուքի ներքոյ ճակատ- ճակատի հպուած, սիրտ-սրտի իրար միացած Աստուծոյ օրհնութեամբ եւ քահանայի միջնորդութեամբ խոստացաք իրար տէր ու հնազանդ լինել եւ մի կեանք ապրել մինչեւ խորին ծերութիւն, ծլէք, ծաղկէք, ազգասէր ու հայրենասէր զաւակներ պարգեւէք մեր ժողովրդին: Դուք գիտակից երիտասարդներ էք, յուսով կը ձգտէք ամուր եւ օրինակելի ընտանիք կազմել, խորքին մէջ՝ իշխանութիւն, որովհետեւ հայրենիքից դուրս հայ ընտանիքի դերը առաւել մեծ է եւ պատասխանատու: Այս ցնծալի հարսանիքի հրաւիրեալների սրտի ամենալաւ ցանկութիւններին միացնելով նաեւ իմս մաղթում ենք իմաստալից եւ պանծալի կեանք: Սիրելի Արտեմ, սիրելի Ռիմա շնորհաւոր լինի ձեր պսակադրութիւնը:

Հարսանիքաւորները որոտընդոտ ծափողոյններով ձայնակցեցին թամաղային ուրախ կանչերով.

-Արտե՛մ եւ Ռիմա՛ շնորհաւոր ձեր թագ ու պսակը, մէկ բարձով ծերանաք:

Արտեմը շատ քայլելուց յոգնած նստել էր հանրակառքի կանգառում դրուած նստարանին, նա անցեալը քրքրելուց գո՛հ էր երեւում, գլուխը ափերի մէջ դրած մտապատկերներով էր տարուած, թէ ինչպէս հարսանեաց հանդէսից յետոյ ինքն ու Ռիման մեկնել էին ծովափ իրենց մեղրամիսը անցկացնելու «Հայկաչէն»- ում: Տեղադրուել էին «Հարսնաչէն» շէնքում: Ի՞նչ երանելի օրեր էին սիրագեղ պահերով: Այս զգայացուց պատկերները նրան ուժ էին տալիս եւ ոգեւորում: Իրենց միասնական կեանքը սիրալիք էր գնում առաջ: Այստեղում էր անախորժութիւն ճաշակի եւ վերաբերմունքի, որոնք փարատուում էին փոխհասկացողութեամբ լուծելով թիւրիմացութիւնը:

«Հայկաչէն»-ի «Հարսնաչէն»-ի մասին մեր ընկերներից մէկը

Շաք.ը էջ 17

ԱՆՂԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

«Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան Հիմնադիր Մարմինը» սիրով կը հրաւիրէ ձեզ, ներկայ գտնուելու անդամական ժողովին, որ տեղի պիտի ունենայ 2008 Մարտ 30ին, Կիրակի երեկոյեան ժամը 3:00ին, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի, Հայաստանեայց Եկեղեցւոյ Առաջնորդարանի «Համբար» դահլիճին մէջ:

3323 N. Glenoaks Blvd. Burbank, CA 91504

Ժողովի Օրակարգ

- Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան Ծրագիր - Կանոնագրի ներկայացում:
- Ծրագիր կանոնագրի Բնարկում
- Առաջարկներ
- Անդամակցութիւն

ԱՅԺՄԵԱԿԱՆ

«ՊԱՏՐԱՍ ԵՂԻՐ»

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՏԱՍ ԿԱՐԵԼՈՐԱԳՈՅՆ ԻՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Ամառը շուտով վերջանում է, արդեն ժամանակն է պատրաստուելու ոչ միայն դպրոցական շրջանին: Ծնողները եւ երեխաները արդեն շտապում են Սառիժլանդ առևտրի կենտրոն, գնելու նոր դպրոցական հագուստներ, բայց մի մոռացե՛ք, որ նաեւ ժամանակն է վերցնելու մէկ ուրիշ պայուսակ եւ այնտեղ տեղադրելու արտակարգ իրավիճակի տաս հիմնական իրերը:

Դպրոցը սկսում է ամէն տարի նոյն ժամանակ, բայց աղէտները գալիս են առանց զգուշացման, յատկապէս այստեղ Հարաւային Գալիֆորնիայում: Վերջապէս, Լոս Անճելոսը հակեալ է տարբեր աղէտային իրավիճակներին, ինչպիսիք են՝ երկաշարժերը, կատաղի հրդեհները, փլուզումները կամ հաւանական ահաբեկիչների յարձակումները:

Դրա համար էլ կարելու է որ ամէն ընտանիք հաւաքի իր արտակարգ իրավիճակի պայուսակը հենց այսօր: Այդ պայուսակը պէտք է ներառի Տաս Հիմնական Իրերը: Զուր, Մնունդ, Կանխիկ գումար եւ կարելու փաստաթղթեր, Հագուստ, Լապտեր, Առաջին Օգնութեան Պայուսակ, Դեղորայք, Ռադիօ, Հիգիենայի Պարագաներ եւ Գործիքներ:

Այս Տաս Հիմնական Իրերը թոյլ կը տան բնակիչներին աղէտների ժամանակ բարձրացնելու ոչ միայն նրանց ապահովութիւնը, այլ նրանց կը տալ աւելի քաջալերութիւն սպասելու փրկարարների օգնութեանը: Առաջարկում է առնուազն եօթ օրուայ արտակարգ իրավիճակի իրերը, յատկապէս սնունդ, ջուր եւ դեղորայք:

«Դժբախտաբար, երկրաշարժերը, կատաղի հրդեհները կամ անգամ համաճարակային հիւանդութիւնները մեզ չեն տայ նախօրօք զգուշացում, որպէսզի մենք հաւաքենք մեր իրերը: Ուրեմն, շատ կարելու է ստեղծել ընտանեկան ծրագիր եւ արտակարգ իրավիճակի պայուսակ հենց այսօր» ասում է Զոնհատան Է. Ֆիելդինգը (MD, MPH, Public Health Director and County Health Officer).

Արտակարգ իրավիճակները անկանխատեսելի են, դուք կարող է տանը չլինէ՛ք, երբ դժբախտութիւնը հարուածի: Ուրեմն, նկատի ունեցիր պատրաստելու իրերի պայուսակը, որ կարող ես պահել քեզ հետ քո աշխատանքի վայրում կամ կարող ես հարցնել քո գործատիրոջը, եթէ նրանք ունեն այդ իրերի պայուսակը ներսում, եթէ դուք չկարողանաք դուրս գալ շէնքից: Եւ քանի որ մեզանից շատերը իրենց ժամանակը անց են կացնում մեքենայում, ապա աւելորդ իրերի պայուսակը շատ գործածելի կը լինի եթէ մենք յայտնուենք անօդնական վիճակում վարելու ժամանակ:

Եթէ դուք արդէն ունէք արտակարգ իրավիճակի պայուսակը, հիմա ճիշտ ժամանակն է վերանայելու նրա պարունակութիւնը: Զմեռային ժամերի վերսկսելուն պէս ժամանակն է վերանայելու ձեր իրերը: Ժամացոյցի սլաքների ուղղելուց եւ մարտկեցների փոխելուց յետոյ, ինչու չստուգել նորից ձեր արտակարգ իրավիճակի պայուսակը, վստահ լինելու, որ դուք ունէք բոլոր անհրաժեշտ հիմնական իրերը:

Պէտք է ստուգել ձեր լապտերները, տեսնելու արդեօ՞ք մարտկոցները դեռ աշխատում են: Զեր կարելու քան փաստաթղթերը

արդեօ՞ք նորագոյններն են: Կը տեղադրուի արդեօ՞ք աւելորդ հագուստներ ձեր մեծացող պայուսակում: Արդեօ՞ք դուք օգտագործել էք վէրքի կապեր ձեր առաջին օգնութեան պայուսակից եւ կարիք ունէք աւելի: Արդեօ՞ք պահածոյացուած ուտելիքի ժամանակը վերջացել է: Արդեօ՞ք դուք աւելցրել էք աւելորդ իրեր ձեր դեղորայքին:

«ՏԱՍ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԵՐԸ» ներկայում կենտրոնացած է «ՊԱՏՐԱՍ ԵՂԻՒՔ. ՄԻԱՍԻՆ ԳՈՐԾԵԼՈՒ» շարժական հանրային ուսուցողական արշաւ, որ ներկայացուում է Լոս Անճելոսի մարզի Հանրային Առողջապահական Բաժնի կողմից: Բնակիչները կարող է տեսած լինեն «ՊԱՏՐԱՍ ԵՂԻՒՔ» շարժական մեքենան, որ շրջում է դպրոցներում եւ հանրային


հաւաքներին, չի շեղնելու Անճելոսցիներին հաւաքելու պայուսակը եւ պատրաստելու ընտանեկան հաղորդակցվելու ծրագիրը:

Արդէն մրցանակակիր՝ «ՊԱՏՐԱՍ ԵՂԻՒՔ. ՄԻԱՍԻՆ ԳՈՐԾԵԼՈՒ» արշաւը յատկապէս ստեղծուել է Լոս Անճելոսի բազմամշակութային եւ բազմալեզու ազգութեան բնակիչների համար:

Արշաւի նիւթերը ներկայացուել են Անգլերէն, Սպաներէն, Չինարէն, Կորերէն, Տայ, Քեմեր, Տագալոգ, Վիտնամերեն, Հայերէն, Ռուսերէն, Արաբերէն եւ Պարսկերէն:

Բնակիչները կարող են տեսնել նոր հանրային ծառայութեան յայտարարութիւնները կամ <http://www.labt.org> կայքէջից արտագրել տասերկու լեզուներով տպագրուած իրերի ցանկը:

International Academy of Los Angeles Presents An Evening Honoring Composer, Director & Pioneer of Armenian Television **SARKY MOURADIAN**



- Manuel
- Kevin George
- Chuko
- Andre Danik
- Narine Shahbazian
- Salpi Mayelian
- Hovik Krikorian
- Harut Hakopian
- Jenny Armen

- Flora Martirosian
- Adiss Harmandyan
- Vatche
- Hovik Grigorian
- Levon Sevan
- Maxim
- Raffi Khardalian
- Razmik Mansourian
- Armen Aloyan

Hosts: Anahit Martirosian, Aramayis Gharibyan, Nouné Serobian

Thursday, April 10, 2008, 7:30 p.m.

ALEX THEATER

216 North Brand Blvd., Glendale, California 91203

**FOR TICKETS CALL: (818) 913-2299
(818) 265-0506**

FOR INFORMATION CALL: (818) 243-5722

ՔԱՋ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի
երեկոյեան
Ժամը 10:00-ից 12:00
Կլէմտէյլի 280-րդ
կայանից

ՏԻԳՐԱՆ ՉՈՒՅԱՃԵԱՆԻ ԶԵՄԻՐԵ ԵՐԳԱԽԱՂԸ

Շաբաթուկու առաջին 8-էն

կեղծորդը եղած է արուեստագէտներու, օրիորդներու, տիկիներու եւ օտար գեղուհիներու:»

Չուհաճեանի երիտասարդ տարիները կը գուգարիպէին հայ ժողովուրդի գարթօնքի եւ վերածնունդի փայլուն շրջաններէն մէկուն: «Ազգային Սահմանադրութեան» վաւերացումը 1860-ին եւ երկու տարի անց Զէյթունի հերոսական ապստամբութիւնը ոգեւորած էր հայ մտաւորականութիւնը: Նաեւ խտրական օտերէթի խումբերու հիւրախաղերու տպաւորութիւնը հայ յառաջագնաց ազգայիններու մօտ յառաջացած էր թատերական արուեստի հանդէպ մեծ ոգեւորութիւն: Ժողովուրդը կ'երագէր ազգային օտերու ունենալ: Այս միջոցով մէջ Չուհաճեան կը յղանայ եւ հմուտ վարպետութեամբ կը ստեղծէ իր ամենախիղճաւ ու գեղեցիկ գործերէն մէկը՝ «Արշակ Բ»-ը: Ըլլալով եւրոպական օտերայի արուեստին քաջածանօթ արուեստագէտ, Եւրոպական մեծ օտերայի օրինակով 1868-ին կը ստեղծէ հայկական առաջին օտերան՝ «Արշակ Բ»-ը, որ հիմնուած էր հայ ժողովուրդի արքայական պատմութեան արուեստը վրայ: Բայց հեղինակի ջանքերը՝ իր օտերան բնի վրայ տեսնելու ապարդիւն կ'անցնին, նիւթական եւ կատարողական միջոցներու անբաւարարութեան պատճառով:

Սակայն 1945-ին, 80 տարի յետոյ, մոռացութեան մատնուած օտերան իր ծնունդը կ'ունենայ, ներկայացուելով Հայաստանի Պետական Օպերային Թատրոնի բեմին վրայ:

Չուհաճեան կը ձգտէր տիրապետել ամենատարբեր երաժշտական ժանրերուն եւ ձեւերուն: Կը պատմուի թէ ան կը սիրէր թափառիլ փողոցներն ու հրապարակները եւ իր շապիկի թեւերու «մանշտներու» վրայ կը գրէր լաճ եղանակները, բարբառի հնչիւնները ու թմբակի դարձուած քները, նաեւ նոյն պահուն ծնող իր մեղեդիները:

70-ական թուականներուն, Չուհաճեան համոզուելով թէ օտերայի ներկայացումներ թուրքիոյ պայմաններուն անհնար է բեմադրելը, շրջադարձ կը կատարէ դէպի օտերէթի ժանրը, որ աւելի մատչելի էր հասարակութեան, եւ բեմադրութիւնն ալ իրագործելը աւելի դիւրին:

Շատ ուժ եւ եռանդ կը սպառէ երաժշտական թատրոնի խումբի ստեղծման: Կը փնտռէ ձայնային եւ բեմական տուեալներով տաղանդաւոր սողաք եւ աղջիկներ, անոնց կը սորվեցնէ երաժշտութիւն, երգեցողութիւն եւ պար, կը գարգացնէ անոնց թատերական ընդունակութիւնները: Յամառ աշխատանքի շնորհիւ կը յաջողի ստեղծել առաջին թատերախումբերէն մէկը, որ ի վիճակի կ'ըլլայ, ստեղծած օտերէթները կատարելու:

1873-ին կը գրէ «Արիֆի Խարախու թիւնը» որ մեծ յաջողութեամբ կը բեմադրուի շատ տեղեր: Տարի մը վերջ կը ներկայացնէ երկրորդը՝ «Քէօսէ Քէհեա»ն 60-է աւելի ներկայացումներով: Ապա 1875-ին կը գրէ իր գլուխ գործոց կատակերգական օտերէթը՝ «Լէպլէպիճի»-ն, որ 100-է աւելի ներկայացումներ ունեցած է Պոլսոյ եւ Կովկասի հայաշատ քաղաքներուն մէջ, մեծ յաջողութիւններու արձանագրելով: Չուհաճեան երկար ընդհատումէ մը ետք վերջապէս 1890-ին կը գրէ «Զէմիրէ» օտերէթ կախարդապատկերը, որ նախորդներէն քիչ մը տարբեր էր իր նիւթով հիմնուած՝ արաբական հեքիաթի մը հիման վրայ: Գործը 1891-ին կը ստանայ իր առաջին կատարումը Ֆրանսական խումբի մը կողմէ: Բայց հակառակ ստացած բացառիկ ընդունելութեան, դերասանական կազմի մէջ եղած վէճերուն պառճառով կը դադարին ներկայացումները, եւ հեղինակին ակնկալած նիւթական ապահովութիւնը չի բերեր:

Չուհաճեանի օտերէթները բեմադրուած են բազմաթիւ անգամներ ըլլալ հեղինակի ղեկավարութեամբ կամ այլոց, ըլլալ հայ դերասաններով կամ օտար: Իր «Լէպլէպիճի»-ն բեմադրուած է բազմաթիւ լեզուներով, Եգիպտոսէն մինչեւ Ֆրանսա, Գերմանիա, Միլիանեան երկիրներ, Միջին արեւելք, Կովկաս կամ Ռուսիա, եւ մեծ համբաւ երաշխաւորած հեղինակին: Բացի օտերէթներէն, Չուհաճեան յորինած է նաեւ պատկառելի քանակութեամբ սիմֆոնիկ, սենեկային, գործիքային ստեղծագործութիւններ, երգեր, ռոմանսներ եւ հոգեւոր գործեր:

1896-ին Չուհաճեան փոխադրուած է Զմիւռնիա յուսալով հանդիպիլ բարեկամներու եւ անոնց օգնութեամբ նիւթական վիճակը բարելաւելու: Շրջապատուած է աշակերտներով, բարեկամներով, բայց անողոք հիւանդութեան պատճառով (քաղցկեղ), մեծ հեղինակը 1898 Մարտ 10-ին, ծայրայեղ չքաւորութեան մէջ, կ'աւանդէ հոգին 61 տարեկան հասակին: Ականատեսներ կը պատմեն թէ ձեռքին բռնած եղած է իր սիրելի հեղինակ վերտիի «Օթէլլօ»-ի ձայնատետրը:

Թաղումը կը կազմակերպէ «Աղքատախնամ Ընկերակցութիւն»-ը: Չուհաճեանի մահուան կապակցութեամբ «Մշակ» թերթը գրած է, «Մահ աղքատութեան մէջ եւ փառաւոր թաղում»:

Տիգրան Չուհաճեան մեր ազգային երաժշտութեան գաղաթիւներէն մէկն է. ան առաջին հայ երաժիշտն էր որ հայ երաժշտական ստեղծագործութիւնը դրաւ արհեստավարժ հիմքերու վրայ: Անոր հարուստ ժառանգը պէտք է իրեն վայել վերաբերմունքի արժանանայ մեր երաժշտական կեանքին մէջ, ըլլալ սփիւռքի ըլլալ հայրենիքի մէջ:

ՓՐԿԱՐԱՐ ԸԱՅՆ

Շաբաթուկու առաջին 16-էն

պատմում էր, այն ինչ որ լսել էր Ատրպատականի առաջնորդ հանգուցեալ տէր Բագրատից, ասում էր թէ.

-Վարդապետ Թոսունեանի հրաւերով գտնուում էինք «Հայկազէն»-ում, նա մեզ տեղաւորել էր «Հարսնաշէն»-ի ներքեւի յարկում: Առաւօտեան վարդապետը հարց էր տուել, թէ.

-Տէր հայր, Գիշերը լաւ քնցի՞ք:

-Ո՛չ, ասացի:

-Ինչո՞ւ, շատ լաւ յարկաբաժին էի ձեզ յատկացրել:

-Եղբա՛յր, վերելի յարկերի կառավարների (մահաճակալ) անընդհատ տեղափոխութիւնները եւ ճոճուցի ձայները չթողեցին մինչեւ լոյս քնենք, միթէ՞ կահոյք էիք փոխադրում յարկերը:

Վարդապետը ծիծաղելով ասել էր.

-Ո՛չ, տէր հայր, այս շէնքում տեղաւորուում են նորապատկերը, որոնք այստեղ են գալիս մեղրամիսը անցնելու:

Վարդապետ եւ քահանայ քահանայ ծիծաղել էին:

Ծնուեց առաջին գաւակը, ուրախացել էին բոլորը, հարազատները շնորհաւորանքի էին գալիս մաղթելով.

-Աչքներդ լոյս Ռիմա՛ եւ Արտեմ՛, բարի գաւակ լինի խնամ Սառան, հօրով-մօրով մեծանայ խնամ Յովհաննէս, հազար տարեկան լինի եւ թող Աստուած դայիմ ձեռքով պահի:

Արտեմի հայրը թոռան համար անուն էր առաջարկել՝ Անդրէ, որը սիրագօթար ընդունուել էր:

Երկուստէք ծնողները շատ ուրախ էին իրենց թոռնիկով, ամէն տեսակ Ռիմային օգնում էին, թողնում էին լաւ կազդուրուի: Խորհուրդ էին տուել Ռիմային, որ իր մայրական կաթով սնի երեխային: Այսպէս կեանքը ուրախ ու գուարթ գնում էր առաջ, Անդրէն օրըստօրէ մեծանում էր յատուկ հոգատարութեան արժանանալով տնեցիների կողմից: Արտեմի զբաղմունքն եղել էր Անդրէն, աշխատանքից տուն հասնելիս Անդրէն իր գրկումն էր, մինչեւ մայրը գօռով առնէր, տանէր, քնացնէր:

Ծնուեց երկրորդ մանչը, անունը դրին՝ Սաքօ, ինչ գուարճալի եւ անմոռանալի օրեր էին, դեռ երկու գաւակը քիչ էր համարում Արտեմը, շարունակ պնդում էր, որ հայ ընտանիքներին պիտի քաջալերել բազմազաւակութիւնը:

Արցախում քաջալերում եւ պարգեւատրում են բազմազաւակ ծնողները: Ընկերային ապահովութեան նախարար՝ պրն. Վասիլի Աթաջանեանը յունիս 29, 06 թուականին Քաջաթաղի շրջանի Գողթանի գիւղում ապրող երեք բազմազաւակ մայրերին՝ Էմիլիա Պողոսեան 15 ծնունդ, Կարինէ Ներսիսեան 11 ծնունդ եւ Սվետլանա Գրիգորեան 10 ծնունդ, մեծ ուրախութեամբ դրամական յատկացումներ է կատարել իւրաքանչիւրին \$5000.00:

Արտեմը անցեալի պեղումների մէջ էր ապրում, ուշ ու միտքը կենտրոնացած էր Ռիմայի վրայ անզգուշ շրջապատին, այդ ընթացքում յանդուրձ գլուխը հարուստի բարեւում է հաստատէս ծառի հետ, ուժեղ ցաւից ա՛խ է արձակում, գլուխը պտոյտ գալով տապալում է գետնի վրայ, ուշա-

թափ վիճակում գետնի վրայ մնում է երկարուած, լաւ է օդի պաղութիւնը նրան ուշքի է բերում, քաշուելով ու քաշքրտուելով կամաց - կամաց ձեռքերը գետնին յենելով դժուարութեամբ կանգնում է, ձեռքով շօշափում է ցաւոտ տեղը, չէր արիւնտտել, սակայն ուռուցք էր բարձրացել: Այս երկրորդ դէպքն էր, որ անվնաս անցաւ, որոշեց շիփ - շիտակ աչքերը ձամբին զգոյշ քայլել:

Նա այս փորձանքներից դաս չառաւ տուն վերադառնալու համար, այլ շարունակեց իր դեղերումները: Նա չկտրուեց իր անցեալի ժապաւէնից, գիշերուայ տան պատահարը տանջում էր իրեն ոնց այրուած քը մարմնի վրայ:

Արդարեւ իրաւունք ունէր:

Չուհաճեանի անմիջապէս հասնել անկարելի է, անհրաժեշտ է համբերութիւն եւ յարատեւ աշխատանք, Արտեմը լաւ էր ըմբռնում այս, էն Ռիման էր, որ խանդելով ընկերուհու «չքեղ» կեանքին, յուզում էր իրենց կեանքը եւ թոյլ էր տուել անցանկալի միջադէպի, առաւելաբար Արտեմի ծնողների հետ միասին ապրելն էլ անհասկանալի պատճառ էր դարձել:

Մի անգամ այնպէս պատահեց, որ Ռիման խռովեց եւ իր ծնողների մօտ գնաց, սակայն նրա ծնողները՝ Սուրէնը եւ Անուշը միջամտել էին, խրատել եւ պահանջել էին առանց ժամանակ կորցնելու տուն վերադառնալ, բացատրելով նրան, որ պապիկի եւ տատիկի ներկայութիւնը բացի օգտակարութիւն, որեւէ անպատեհութիւն չունի: Նրանց լինելը շատ կարեւոր է երեխաների դաստիարակութեան տեսակէտից, նրանց միջոցով է փոխանցուում մեր ազգային վարք ու բարքը մատաղ սերնդին: Հայկական առածն ասում է՝ այն տան մէջ որ տատիկ կամ պապիկ չկայ, մի ժայռի կտոր դնել տանը որպէս ծնողի խորհրդանիշ:

Արտեմը արագ ու բարկացած էր քայլում, բառեր էր փնթփնթում ձեռքը թափահարելով օդի մէջ.

- Ինչո՞ւ իմ ծնողներին պիտի անարգէր, չէ որ նրանք միայն ինձ ունեն պաշտպան այս աշխարհում: Միթէ՞ ես այն ապերախտ տղայի նման պիտի լինեմ, որ իր գառամած մօր խափելով թողել էր Ղազուլիի հայոց եկեղեցու առջեւը ասելով... Մայրի՛կ, դու էստեղ նստի՛ր, սպասի՛ր, հիմա վերադառնում եմ: Նա մօրը թողել էր մենակ ու անապաստան եւ ինք կնոջ հետ արտագաղթել էր: Ձէ՛, չէ՛, ես ապերախտ չեմ լինի, ես կըպէս չեմ անի, որ ծնողի անէծքն ենթարկուեմ, ծնողի անէծքը Աստուծու պատիժ է, անխուսափելի պատիժ: Ախր, ես ո՞ւմ յոյսին թողնեմ նրանց, հայրս սովորական թոշակառու է, ոչ էլ աւելորդ տուն ու տեղ ունենք, դժուար թէ կարողանան առանձին ապրել, ինչո՞ւ Ռիման չի հասկանում իմ վիճակը:

-Ինչո՞ւ, ինչո՞ւ, ասելով խելագարի պէս առաջ էր գնում, մէկէն նրա առաջը ծառացաւ մի միջահասակ ոստիկան, որը խուզարկող նպատակով մօտեցաւ եւ հարց տուեց.

-Աղա՛, ի՞նչ էիր ասում բարձրաձայն եւ քայլում, ո՞ւր ես գնում էս ուշ ժամին, էս ցուրտ եղանակին, փողոցներում մարդ չկայ, ո՞ւր ես գնում:

(Շաբաթուկու 3)

ԳՕՍԹԱ ՄԵՍԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Շաբաթուկու առաջին 8-էն

Տօքթ. Աստղիկ Տատրեան եւ ամուսինը Տօքթ. Ուրիլիմ Սօ \$27,000
Գոկտ. եւ Տիկին Ռաֆֆի եւ ձուկ Գաֆէյսեան \$12,000

Տէր եւ Տիկ. Փիթեր եւ Հրաչուհի Պատրեան \$10,000

Տէր եւ Տիկ. Արամ Պասէնեան \$10,000

Տէր եւ Տիկ. Նշան եւ Բուպի

Տէրուհի Եան \$7,500

Տէր եւ Տիկ. Ժէրի եւ Մարինոն Փալանճեան \$5,000
եւ գաւակները՝ Ալեքս եւ ձեպիքս Փալանճեան \$5,000

Տօքթ. Արա եւ Տիկ. Տօքթ. Արմինէ Դաւիթեան եւ Տօքթ. Աւօ Դաւիթեան \$5,000

Տիկ. Ժին Պարսամ \$5,000
Տէր եւ Տիկ. Քօսթի եւ Մարինէ

Շիրկանեան \$5,000

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

ԱՐԹՈՒՐ ԱՐՐԱՅԱՍԸ ԿՐԿԻՆ ՅԱՂԹԱՆԱԿ ՏԱՐԱԷ

Հայազգի բռնցքամարտիկ Արթուր Աբրահամը Շաբաթ օրը Գերմանիայում յաղթանակ տարաւ ամերիկացի էլիթին Այալայի նկատմամբ՝ 7-րդ անգամ պաշտպանելով IBF վարկածով աշխարհի ախոյեանի կոչումը: Մրցամարտը 12-րդ ռաունդում աւարտուել է նոքաուտով:



IBO մրցակարգում Աբրահամը երկրորդն է ամերիկացի Քեյթ Պավլիկից յետո: Ամրանը Աբրահամը հանդէս է գալու Նիւ Եորքի հանրայնաց «Մեդիսոն Սքուեր Գարդեն» դահլիճում, սակայն առայժմ պարզ չէ, թէ ով է լինելու նրա մրցակիցը:

«Յանկանում եմ հանդիպել Պավլիկի հետ», - ասել է Աբրահամը «Ասոշիէյթեդ Փրես»-ին: 26 մարտերից 21-ը Աբրահամն աւարտել է նոքաուտներով:

ՇԱԽՄԱՏ

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆ ՆՈՒԱԾԵՑ «ԱՄԲԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՏԻՏՂՈՍԸ

Ֆրանսայի Նիս քաղաքում աւարտուեց «Ամբեր» միջազգային մրցաշարը: Լեւոն Արոնեանը, որը նախապէրջին փուլում 13,5 միաւորով արդէն անհասանելի էր դարձել իրեն հետապնդողներին՝ ժամանակից շուտ նուաճելով յաղթողի կոչումը, վերջին՝ 11-րդ, փուլում ոչ-ոքի խաղաց («կոչը» եւ արագ շախմատում) Պետեր Լեկոյի (Հունգարիա) հետ եւ մրցաշարը եզրափակեց 14,5 միաւորով:



12-ական միաւորով 2-5-րդ տեղը զբաղեցրին Վեսելին Թոփալովը (Բուլղարիա), Վլադիմիր Կրամնիկը (Ռուսաստան), Պետեր Լեկոն (Հունգարիա) եւ Մագնուս Կարլսենը (Նորվեգիա):

Կոչը շախմատում 6,5 միաւորով 1-4-րդ տեղը բաժանեցին Լ. Արոնեանը, Վ. Թոփալովը, Վ. Կրամնիկը եւ Ալեքսանդր Մորոզեւիչը (Ռուսաստան), իսկ արագում՝ 8 միաւորով առաջինը ճանաչուեց Լ. Արոնեանը: Նրան յաջորդեցին Վասիլի Իվանչուկը (Ուկրաինա)՝ 6,5 միաւորով, Բորիս Գելֆանդը (Իսրայէլ), Պետեր Լեկոն եւ Մագնուս Կարլսենը՝ 6-ական միաւորով:

25-ամեայ Արոնեանը այս մրցաշարում յաղթանակ է տօնել այնպիսի յայտնի շախմատիստների նկատմամբ, ինչպիսիք են աշխարհի ներկայիս ախոյեան Վիշվանաթան Անանդը, աշխարհի նախկին ախոյեան Վեսելին Տոպալովը եւ այլն:

ՖՈՒԹՊՈՒԼ

ՀԱՅԱՍՏԱՆ - ՂԱԶԱՆՍՏԱՆ 1-0

Հայաստանի ֆուտպոլի Ազգային Հաւաքականը Հոլանդիայի Ռոտտերդամ քաղաքում կայացած ընկերական խաղում 1:0 հաշուով յաղթանակ տարաւ Ղազախստանի հաւաքականի նկատմամբ:



Միակ կողմ հանդիպման 62-րդ րոպէին իսկել է Ամստերդամի «Ախաքս»-ի յարձակուող էդգար Մանուչարեանը:

Հայ ֆուտպոլիստները ամբողջ խաղի ընթացքում տարած քայլին մեծ առաւելութիւն ունէին եւ 70-րդ րոպէին կարող էին կրկնապատկել հաշիւը, սակայն թիմի աւագ Սարգիս Յովսէփեանը չկարողացաւ իրացնել 11-մետրանոցը:

Այս տարի թիմի դեկը ստանձնած դանիացի մարզիչ Եան Պոուլսենի զլխաւորութեամբ անցկացրած չորս հանդիպումներից Հայաստանի հաւաքականը յաղթանակ է տարել երեքում՝ Մալթայի, Բելառուսի եւ Ղազախստանի թիմերի նկատմամբ, եւ պարտուել մէկում՝ Իսլանդիայի հաւաքականից:

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիան պայմանաւորուածութիւն է ձեռք բերել Մոլդովայի ֆուտպոլի ֆեդերացիայի հետ՝ 2008 թուականի Մայիսի 28-ին այդ երկրի ազգային ընտրանու հետ ընկերական հանդիպում անցկացնելու կապակցութեամբ: Մոլդովայի եւ Հայաստանի հաւաքականների հանդիպումը տեղի կ'ունենայ մեր մրցակցի հարկի տակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԳԱԲԱԹԻ ՄՐՑԱՇԱՐՔ

Ֆուտպոլի Հայաստանի գաւաթի 1/8-րդ եզրափակիչում կայացան պատասխան հանդիպումներուն արցանաքրուեց հետեւալ արդիւնքները:

«Միկա-2» - «Կիլիկիա»	2-3	(առաջին հանդիպում 0-2)
«Բանանց-2» - «Ուլիսիս»	1-2	(առաջին հանդիպում 1-4)
«Շենգաւիթ» - «Շիրակ»	1-0	(առաջին հանդիպում 1-3)
«Միկան» - «Արարատ-2»	4-0	(առաջին հանդիպում 7-0)
«Փիւնիկը» - «Պատանի»	4-0	(առաջին հանդիպում 11-2)
«Գանձասարն» - «Փիւնիկ-2»	5-0	(առաջին հանդիպում 3-0)

Այսպիսով, բարձրագույն խմբի 8 թիմերը կը շարունակեն պայքարը պատուաւոր մրցանակի համար: Ապրիլի 2-ին կը կայանան քառորդ եզրափակիչ առաջին հանդիպումները: Կը մրցեն հետեւեալ զոյգերը. «Շիրակ»-«Բանանց», «Միկա»-«Կիլիկիա», «Փիւնիկ»-«Գանձասար», «Արարատ»-«Ուլիս»: Պատասխան խաղերը տեղի կ'ունենան Ապրիլի 10-ին:

Palm Springs

PALM SPRINGS ԱՐԶԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱՂՈՒԹԵԱՆ

Փայլմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

- Վարձման գներն են՝
- Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ \$ 400
- Long Weekend-ների համար՝ \$ 500
- Մէկ շաբաթուայ համար՝ \$ 675
- Մէկ ամսուայ համար՝ \$ 1450



Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Ժագ եւ Արմինէ Գալանճեանի առջինեկ աղջիկ գաւակով մը բախտաւորուելու ուրախ առիթով, որ անուանած են իզապէլ, Թէքսաս նահանգէն Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Անի եւ որդին Ալէք Օճանեաններ կը շնորհաւորեն ընտանեկան պարագաները, յատկապէս նորածինի մեծ հօր եւ մեծ մօր՝ Տէր եւ Տիկ. Ժողէֆ եւ Ռիթա Գալանճեանները:
Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

ԿՈՉ ՕԳՆՈՒԹԵԱՆ



Ես ԿԱՐՕ ԹՈՒԳԱԹԼԵԱՆ, 64 տարեակն, ամիսներէ ի վեր կը տառապիմ Leukemia-է (արեան ֆաղկեղ): Յաղթելու համար այս հիւանդութեան, պէտք ունիմ որոշ տեսակի՝ ինձի յարմարող արիւնի: Եթէ յարմարող արիւնը գտնուի, տուող ենթական ոչ մէկ վտանգ կամ դժուարութիւն պիտի չունենայ. պարզապէս՝ յատուկ գործողութեամբ մը, մէկ թեւէն առնուած արիւնը, միւս թեւէն իրեն ետ պիտի ներարկուի: 18 տարեկանէն վար եղողները չեն կրնար օգնել ինձի: Կրնաք ինձի հեռախօսել հետեւեալ թիւով՝ (818) 415-4661: Հաճեցէք օգնել ինձի, այլապէս կրնայ շատ ուշ ըլլալ:
Կանխայայտ շնորհակալութեամբ՝
ԿԱՐՕ ԹՈՒԳԱԹԼԵԱՆ

ԳՐԱՒՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

- | | |
|--------------|--|
| Ապրիլ 5 | Spanish Night |
| Ապրիլ 26 | Las Vegas Trip |
| Մայիս 11 | Մայրերու Օրուայ նախաճաշ |
| Յունիս 14 | Հայրերու Օր |
| Օգոստոս 10 | Հանգանակային ճաշկերոյթ «Մասիս» շաբաթաթերթի |
| Հոկտեմբեր 4 | Հ.Ս.Մ.ի Տարեկան Պարահանդես |
| Դեկտեմբեր 31 | Նոր Տարուայ խրախճանք |

ՀՆՉԱԿԵԱՆ ՊԱՏԳԱՍԱԴՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐ ՎԵՐԱՆՈՐՈՎԵՑ ԻՐ ՈՒՆՏԸ ՀԱՆԴԵՊ ԻՐ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Շարունակում է 1-ին

րունդները, անոնց ջամբելով հայեցի կրթութիւն ու գաղափարախօսական պատրաստութիւն, որպէսզի կարելի ըլլայ ապահովել առողջ եւ գաղափարապաշտ սերնդափոխութիւն, ապագայի հեռանկարներով:

Ժողովը յոյժ կարեւոր գտաւ մեր եկեղեցական տաղմապի լուծումը: Ան շեշտը դրաւ մեր հոգեւոր դասուն իր կրթական ու մշակութային պատմական դերին վերադառնալուն վրայ:

Ժողովը առաջադրեց իր գործակցութեան ձեռքը երկարել այն բոլոր հոսանքներուն, որոնք կրկանգնին մեր հայրենաբնակ բազմաչար ժողովուրդի պաշտպանութեան դիրքերուն վրայ: Գործակցութեան ձեռքը երկարել սփիւռահայայն բոլոր հոսանքներուն, որոնք կրկանգնին ժողովրդավարութեան, սահմանադրական եւ արդարադատական իրաւունքներուն կենսագործման հողի վրայ, մայր հայրենիքէն ներս: Գործակցութեան ձեռքը երկարել բոլոր այն հատուածներուն, որոնք կրկանգնին պայմանական կաշառակերութեան, հարստահարութեան եւ կեղդոյական դրոյթներուն դէմ:

Տարակոյս չկայ՝ ժողովը խստիւ դատապարտեց Գոչարեան-Սարգսեան նախագահական ընտրակեղծիքները, բռնաբարքները, սպառնալիքները: Ան նոյնպէս դատապարտեց Ազատութեան հրապարակի վրայ

տեղի ունեցած Գոչարեան-Սարգսեանի հրահանգով Մարտ 1-ի ժողովրդասպանութիւնը, ու մինչեւ օրս, տիւ եւ գիշեր շարունակուող ընդդիմադիր Բաղաճկան գործիչներու եւ «կասկածելի» անցորդներու կամ գմահանօրէն կատարուող ձեռքարկութիւնները, հարցաքննութիւններն ու բանտարկութիւնները: Ժողովը պահանջեց Բաղաճկան եւ այլ բոլոր արգելափակումներու ազատ արձակումը:

Ինչպէս միշտ, Ա.Գ.Հ. Կուսակցութիւնը պիտի շարունակէ զօրավիզ կանգնիլ Արցախի Հանրապետութեան, իր կարելի բոլոր միջոցներով:

Ա.Գ.Հ. Կուսակցութեան Պատգամաւորական Ժողովի ակնկալութիւնն է մեր հայրենի ու սփիւռահայ ժողովուրդէն՝ աւելի քան երբեք միասնանալ, ի խնդիր հայրենի ժողովուրդի բարօր կեանքին: Նաեւ, ան կ'ակնկալէ մեր անբասր ժողովուրդի ծոցէն ծնած, անոր կեանքով սնած ու անոր գուրգուրանքին տակ հասակ առած մեր հայրենի բանակէն՝ խնայել մէն մի հայու կեանքը, անոր ապահովութիւնը համարելով մեր ժողովուրդի լինելութեան ու հայրենիքի բարգաւաճման գրաւական...:

Տակաւ երիտասարդացող ղեկավար կազմ մը կոչուեցաւ պաշտօնի՝ բանաձեւում որոշումները իրագործումի հասցնելու համար:

Փա՛նֆ, պատի՛ւ, ու մշտական վերելք՝ Մայր Կուսակցութեան:

ՄԻՆՉ ԻՐԱՔ ԿՐԱԿՆԵՐՈՒ ՄԷՁ...

Շարունակում է 7-ին

թաղրաբար, կը գործէին Ալ-Քալիֆա Նորասկները: Պահ մը ընդունինք որ այս մէկը փոքրիկ «յաղթանակ» մը նկատուեցաւ Պուշի իշխանութեան կողմէ, որուն համար ինքնագոհութեան արձագանքներ եղան ամերիկեան պատերազմի կողմնակիցներուն: Նաեւ ակնկալութիւններ եղան թէ զինուորական «յաւելումն» ետք, Իրաք զրկուած գործերը հաւանականութիւն պիտի ունենային քանի մը ամիսէն տուն վերադառնալու:

Մինչ կացութիւնը այսպէս կը դասաւորուէր Իրաքէն ներս, հոս, Ամերիկայի մէջ, ընտրական աշխատանքները իրենց անակնկալները կը ներկայացնէին ժողովուրդին: Հանրապետական ճակատէն ներս, Մքքէյնի թեկնածութեան վաղորդայնին, այս մէկը սկսաւ իր ճամբորդութիւնները կատարել Իսրայէլ, Անգլիա եւ Ֆրանսա, այդ երկիրներու մօտ սկսելու համար իր «նախագահական» աշխատանքները: Միւս ճակատի վրայ, Օպամայի եւ Գլինթընի փոքր եւ մեծ «գալթակողութիւնները» որոշապէս պիտի տկարացնէին երկուքին ալ դեմոկրատ կուսակցութեան թիւ մէկ թեկնածուն դառնալու հաւանականութիւնները: Օպամայի պարագային, պատուելի ձերեմի Ռայթի ցեղային, ծայրահեղ արտայայտութիւնները, որոնց նկատմամբ Օպամա կը քննադատուէր իր հակաճառելու զգուշաւորութեամբ, իսկ Գլինթընի պարագային, Պոսնիայի մէջ իբրեւ թէ արձակագնաներու փամփուշտներէն խուսափելու արկածախնդրութիւնը, որ սխալ դուրս ելաւ, ուրեմն այս երկուքին ալ աստղը մշտնջողութեամբ, թէեւ երկուքն ալ բաւականին հեռու էին անհրաժեշտ պատգամաւորները ասպնովելու համար, որպէսզի դառնան իրենց կուսակցութեան ընտրեալը, հանրապետական Մքքէյնի դէմ հակադրուելու:

Իրերու այս կացութեան մէջ, չես գիտեր ինչպէս, մէկէն ի մէկ, կացութիւնը բռնկեցաւ Պասրայի

մէջ, եւ շիւր կասկածելի միլիտաներ հակադրուեցան վարչապետ Մալիքի պաշտօնական գործին, որոնք պատրաստուած էին ամերիկեան բանակի կողմէ: Շիւր ծայրահեղ եւ երիտասարդ իմամ՝ Մուքթատա Սատրի միլիտան, իբրեւ թէ չէր մասնակցեր բախումներուն, հրահանգ ստացած ըլլալով Սատրէն, փողոցներէն քաշուելու: Մինչ այդ, երբ այսպէս լուրջ բախումներ տեղի կ'ունենան Պասրայի մէջ, անդին, մայրաքաղաք Պաղատա շարունակ հրթիռներ կը ստանար, ապահով նկատուած «Կանաչ Գօտի» ներս, ուր կը գտնուէր ամերիկեան դեսպանատունը: 4-5 օրուայ վրայ հաստատուած կրակմարի դրութիւնը անժամանակ կերպով կը յետաձգուէր, մինչեւ որ յստականար Պասրայի կացութիւնը, եւ Պաղատաի վրայ արձակուող հրթիռային գէնքերը:

Մինչ այս է կացութիւնը Իրաքեան ճակատէն ներս, յայտնի է թէ ի՞նչ տրամաբանութեամբ նախագահ ձ. Պուշ տակաւին կը շարունակէ խօսիլ Իրաքի մէջ տեղի ունեցող յաջողութեանց մասին: Կամ այն է որ կը նմանի Չայլամին որ գլուխը խրած անապատի աւազին, կը կարծէ թէ ամէն ինչ լաւ կ'ընթանայ, եւ կամ ալ երանելի անդիտութեամբ, որ կը նմանի Ներոնի անհասկնալի վերաբերմունքին, Հռոմի հրդեհին ի դիմաց: Նախագահ ձ. Պուշ կը նմանի Ֆրանսայի Լուի 14րդ թագաւորին, որ առանց խպնելու, կը յայտարարէր - «Ինձ մէ ետք, ջրհեղեղ», այսինքն շատ ալ հոգը չէ թէ ինչ կրնայ պատահիլ երբ ինք հրապարակէն քաշուի: Հետաքրքրականը հոն է, որ նախագահ Պուշ տակաւին շուրջ 11 ամիսներ ունի իշխանութեան գլուխ մնալու համար: Ինչո՞ւ այդ ժամանակը չի յատկացներ խաղաղութեան գործընթաց մը սկսելու համար, որպէսզի պատմութեան առջեւ զնահատելի ժեստ մը արձանագրած ըլլայ: Ըստ երեւոյթին, Իրաքեան պատերազմի հետ առնչուող լծակները դուրս կը մնան իր հակակշռէն...

ՈԱԶՍԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՆԱՐԱԴՈՐ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՍՊԱՍՈՒՈՂ ՄԱՐՏԱՅՐԱՒԵՐՆԵՐԸ

Շարունակում է 7-ին

հատուցուել դարաբաղեան յաղթանակով:

Հայաստանի ազգային անվտանգութիւնը երկրում ժողովրդավարական արժէքների վերահաստատման արդիւնքով մեծապէս պայմանաւորեց ՌԱՀՀԿ աւագ փորձագէտ Յովսէփ Խուրշուդեանը: Նրա տեսակէտով՝ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութիւնը (ՀԱՊԿ) իր անդամ պետութիւններում աւելի շուտ լուծում է վարչակարգերի պահպանման, քան երկրի անվտանգութեան ապահովման խնդիր: «Քաղաքակրթական կողմնորոշման առումով էական խզում կայ մեր ժողովրդի ձգտումների եւ առկայ քաղաքական համակարգի ու իշխանութիւնների գործելաոճի միջեւ. հասարակութիւնը մեծամասամբ հակուած է արեւմտեան արժէքներին, իսկ իշխանութիւնը՝ ՀԱՊԿ-ի տառին ու ոգուն», - նկատեց Խուրշուդեանը՝ նշելով, որ ՆԱՏՕ-ին վրաստանի անդամակցութեան պարագայում Հայաստանը յայտնուելու է մեկուսացման մեջ: Ներկայ հանգրուանում փորձագէտը կարեւոր է համարում ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի յարաբերութիւնների սերտացումը՝ անկախ նրանից, թէ որ փուլում կը կայանայ լիբրաւ անդամակցումը:

Անկախ փորձագէտ Մանուէլ Սարգսեանն էլ անդրադարձաւ տարածաշրջանային այն փոփոխութիւններին, որոնք կարող են տեղի ունենալ դէպի Կովկաս ՆԱՏՕ-ի ընդարձակման պարագայում: Բանախոսի հայեացքով՝ հնարա-

վոր փոփոխութիւնները Հայաստանին, ի տարբերութիւն վրաստանի, կը բերեն միանգամայն այլ խնդիրներ՝ պայմանաւորուած մասնաւորաբար հարեւաններից սպասուող վտանգով, գրաւիչ բնական պաշարամիջոցների բացակայութեամբ եւ արցախեան հակամարտութեան չկարգաւորուած լինելու հանգամանքով: «Այնպէս է ստացուել, որ համաշխարհային քաղաքականութեան մէջ Հայաստանի աշխարհաքաղաքական արժէքն աղերսուած է տարածաշրջանում նրա ունեցած դերին. դա Թուրք-Իրաքի եւ Ատրպէյճանի ռազմաքաղաքական ակտիւութիւնը գաղտնի գործօնի դերն է», - շեշտեց Սարգսեանը՝ յաւելելով, որ նմանօրինակ դերակատարութիւնը հաւասարապէս ընդունելի է ե՛լ ՆԱՏՕ-ի, ե՛լ Ռուսաստանի համար, որոնց հետաքրքրում է բոլորովին այլ դիտանկիւն՝ Թուրք-Իրաքի վրայ հայկական գործօնի ազդեցութիւնը:

Մաւալուած հարցուպատասխանին եւ մտքերի փոխանակութեանը մասնակցեցին Հայաստանի Հանրապետութիւնում վրաստանի արտակարգ եւ լիազօր դեսպանի խորհրդական Նինո Ապցիաուրին, ՌԱՀՀԿ աւագ փորձագէտ Թաթուլ Յակոբեանը, Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցութեան քաղխորհրդի քարտուղար Էդուարդ Անտինեանը, աշխարհաքաղաքագէտ Արա Սարգսեանը, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի ղեկավար Թեան Պողոսեանը, նոյն կենտրոնի փորձագէտ Աշոտ Խուրշուդեանը եւ ուրիշներ:

ՇՆՈՐԿԱԿԱԼԻՔ
Տէր եւ Տիկ. Ստեփան Յովակիմեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց սուգին՝ **ՅԱԿՈՒՔ ՍԱՐԳՍԻ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ** մահուան տխուր առթիւ, հեռաձայնելով, փոխան ծաղկեպսակի նուիրատուութեանց եւ ցաւակցական այցելութեամբ: Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

BE AN ANGEL  SAVE A LIFE

COAST TO COAST TELETHON FOR ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY'S PAN-ARMENIAN STEM CELL HARVEST CENTER

IN YEREVAN, ARMENIA

SUNDAY, APRIL 13, 2008
4 PM-9PM PST / 7PM-12 AM EST

Make Your Pledge, Call Today:
Toll Free 1-888-75-ABMDR
www.ABMDR.am

Broadcasted throughout:
United States | Canada | Armenia | Artsakh | Middle East
South America | Australia | Europe

WEBCAST:
www.ABMDR.am & www.HorizonArmenianTV.com

For additional Information visit the website or call: (323) 663-3609

The Center:

- Will bring this modern day medical miracle within reach of many Armenian patients who are often denied this life saving procedure because of prohibitive costs.
- Will significantly improve the collection of stem cells from volunteer donors, & reduce the cost of the transplantation by over 40%.
- Will become a regional center for stem cell harvesting, bringing not only revenues from other countries, but positioning the Center as a vital and active player among transplantation centers worldwide.



HELP US BUILD BLOCKS THAT WILL MAKE DREAMS COME TRUE!